Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
777

11999

43712-ú.l.

# ԲԱՐԻ ԻՐԻԿՈ՛ՒՆ

# ՊՐՆ. ՓԱՆԹԱԼՕՆ

ՆՈՒԱԳԱՒՈՐ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ

Ի ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾ

ՅՕՐԻՆԵԱԼ

Ի Պ. Պ. ԼՕՔՐՈՒԱՅԷ ԵՒ ՏԸ ՄՕՐՎԱՆԷ

ԵՒ ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

ՅԱՔԻՍՈՂՕՄԱՅ Մ. ԳԱՐԻՊԵԱՆ

(1992)

ԳՐԱԴԱՐԱՆ

Гос. Библиотека
им. Мясникяна

28324-62

Ս. ՀԱՄԱԶԳԵԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ԻՄԱՄ ԱԱԼԻ ԽԱՆ

777-60

28-780

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սա մէկ երկու տարուանս մէջ Ազգը թատրերգութեան տուած օգուտը յայտնի տեսաւ. ու քաջ խելամտեց՝ որ զԱզգն 'ի յառաջադիմութիւն առաջնորդող ճամբուն մէկն ալ աս պիտի ըլլայ· ուստի բոլորով սրտիւ անոր յարեցաւ ու զանի պատուեց։

Մենք ալ Ազգիս այս փափաքը տեսնելով՝ յորդորուեցանք սոյն նուագաւոր թատրերգութիւնը (օբէռա) թարգմանելով՝ անոր նուիրել 'ի քաջալերութիւն իւր փափաքանացը· յուսալով որ այս մեր դոյզն աշխատութեան երախայրիքը պիտի խրախուսէ ու ներողամիտ պիտի ըլլայ մեր թերութեանցը,

1862 Ապրիլ 1·

Ա· Մ· ԳԱՐԻՊԵԱՆ

# ԱՆՈՒԱՆՔ ԱՆՁԱՆՑ

ԹԻՈՒԻԹՕՖՕԼՕ · *Բժիշկ*
ԲԱՆԹԱԼՕՆ · *Հարուստ վաճառական Բոլոնիոյ*
ԼԷԼԻՕ · *Իւր որդին*
*Առաջին բեռնակիր*
*Երկրորդ բեռնակիր*
ԼՈՒԿՐԵՏԻԱ · *Բժշկին կինը*
ԵԶԱԲԵԼ · *Բժշկին որբը*
ՔՕԼՕՄՊԻՆ · *Նին սենեկապետ (քամէրիեր)*

*Տեսարանն 'ի Վէնէտիկ՝ 'ի տուն բժշկին ։*

# ԲԱՐԻ ԻՐԻԿՈՒՆ ՊԱՐՈՆ ԲԱՆԹԱԼՕՆ

## ՆՈՒԱԳԱԽՈՐ ԹԱՏՐԵՐԳՈՒԹԻՒՆ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ

## Ի ՄԻ ԱՐԱՐՈՒԱԾ

*Բժշկին դահլիճը. - Ձախ եւ աջ կողմը դէպ 'ի հասարակութիւնը նայող երկու դռներ. - Աջ կողմը, երրորդ աստիճանին վրայ դէպ 'ի մառա-նասենեակը (օֆիս) տանող դուռ մը. - Ձախ կող-մըն ալ ասոր դէմը նայող ուրիշ դուռ մը. - Ներ-սի կողմը դէպ 'ի ձախ, վէնէտիկի ջրանցքներուն մէկուն վրայ դէպ 'ի դուրս ելած նեղ պատշգամ մը (թէրացա), ասոր վրայ նայող մեծ պատուհան մը. աջ կողմը դէպ 'ի դուրս տանող ուրիշ դուռ մը. - Կրկին աջ կողմը առաջին աստիճանին վրայ ընդարձակ գրատուն մը գրքերով լեցուն, վրան քառածալ գրքերով մեծ բազմոց մը, որուն նըս-տարանը ըստ հաճոյից կրնայ վերցուիլ, եւ վրան պառկելով հանգստանալու ալ կը ծառայէ - Քովը պզտիկ աշտանակակալ մը (բազմոց աշտանակի). - Ձախ կողմը գրքերով, աշխարհացոյցներով եւ երկրագունտներով ծածկուած երկայն գրասեղան մը, թորանոցներ (իմպիք), հալոցներ, հետաքր-քրական նիւթեր, խառն 'ի խուռն տարածուած կամ իրարու վրայ կուտուած հին կարասիքներ։*

## ՏԵՍԱՐԱՆ Ա.

ԵԶԱԲԵԼ, ԼՈՒԿՐԵՏԻԱ, ՔՕԼՕՄՊԻՆ

*(Վարագոյրը վեր ելած ատենը տեսարանը պարապ է)։*

# ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

(*Դրսէն ձայն մը* *)

ՁԱՅԳԱՆՈՒԱԳ (*սէռէնատ*)

## ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Վերջապէս օրն խոստացեր այն առարկան սիրելի
Որուն ես եմ զմայլած,
Պատուհանէն իւր ծըռած
Գուցէ թէ զաղտնի կ'ըսպասէ ինծի ։
Դարձաւ կրկին մըթութիւն
Ո՛ վէնէտիկ գեղգեղուն,
Սա սիւզին հետ
Ինձ պէս եւ դու
Զարթիր քունէդ
Զսէրն երգելու ։

ԵՐԵՔԸ *միասին*

ԼՈՒ. (*ստորին ներքնայարկին յաջ կողմն երկրորդ դու-
ռը բանալով*)

Զայգանուագ, օ՛ն յառաջ,
Առանց ձայնի տանք ականջ ։

ԵԶԱ. (*մի և նոյն ստորնայարկէն, հասարակա-
ցեան ճակատը նայող յաջ կողմն դուռը բանալով*)

Զայգանուա՛գ, ընթանա՛նք
Սիրտըս տրոփէ ականջ տանք ։

ՔՕՂ. (*մի և նոյն խաւը դէպ 'ի հասարակա-
ցանը նայող աջ կողմն դուռնը մէջ*).

Զայգանուա՛գ, միտ դնենք

---

* Աս երգերը երգողը Լէլիօն է ։

Աւանց ակամբ տեսնելու՝
Տանք ականջներս անոր մենք։

ՄԻԱՏԵՂ

Ականջ տանք կապոյտ զեփեր
Պատեն աստղեր
Սրփուէ զխուր քօղ խրխկուն ։
Ականջ տանք զեփեր ,
Զոր պատեն աստղեր ,
Սիրահարներուն
Կ՚ընդունի երդումներ ։

(Լուսերեւս տեսարանին մէջը գրաւեղանին մօտ, Եփեսէլ ու Քօլօմպէն իրենց տունը սեղանին վրայ մտնէն ելնէն, առանց շէրար տեսնելու)։

ԼՈՒ. (առանձին) Ո՛րք կրնայ երգել այսպէս։

ԵՂԱ. և ՔՕԼ. (նոյնպէս)

Այս զարմանքը ուստի՞ է ։

ԼՈՒ. (առանձին)

Ան ձխաւո՞րն է միթէ ,
Որ աս առտու տեսայ ես ,
Ցես աւարտման եկեղեցւոյն
Յամառաբար զար ետեւէս ։

ԵՂԱ. (առանձին , ուրախութեամբ)

Իմ սիրահարս միթէ էր .

ՔՕԼ. (նոյնպէս)

Աստուա՛ծ , արդեօք Քառլէ՞նն էր .

ՄԻԱՏԵՂ

Ժամն ինձ կ՚ըլլայ օգնական

Ականջ դընենք ՝ մըտիկ ընենք . . .
Զ'եմ լըսեր բան ։
(Դըսէն ձայնը)

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Աւա՜ղ յուսամ ընդունայն նշան մը ինձ չերեւար.
Ի մէջ իրեն ցաւոցը
Ինչո՞ւ համար իմ սիրտը
Անհաւատարիմ ըլլալ չըր կրնար ։
Դարձաւ կրկին մթութիւնն
Ո՛ Վենետիկ գեղգեղուն
Սա սուգին հետ
Ինձ պէս եւ դու
Զարթիր քունէդ ,
Զսէրն երգելու ։

ՄԻԱՏԵՂ .

Ես կ'զգամ զայն ,
Այս ձայներէն
Խըռովեցան
Ըզգայարանքս իմ ամէն ։
Օ՛ն յառաջ՝ կապոյտ զեփեր
Պատեն աստղեր
Սփռէ զիւր քօղ իրիկուն ։
Օ՛ն յառաջ , զեփեր ,
Զոր պատեն աստղեր ,
Սիրահարներուն
Կ'ընդունի երգումներ ։
( Անտոնյօ երաժշտները կ'առաջնորդէ յառաջ

չ՛երեւան և յանկարծակի երեւնին իրարու հանդպելէն)

ԵԶԱ․ Ո՛հ ։

ՔՕՂ․ Տի՛կին ։

ԼՈՒ․ Եղաբե՛ր ։

ՄԻԱՏԵՂ, միանգամայն զատ զատ ։

Ի՛նչ անպատեհ ժամ ցաւալի․

ԼՈՒ․ Ի՛նչպէս երկուքդ, յայսմ վայրի՛․

ՔՕՂ․ (ոյժգին կերպով)

Տիկի՛ն, սենեակս եկէի
Եւ գիտմամբ իսկ փութայի,
Ձի անփոյթութիւնս
Եւ անհոգութիւնս
Կրնար զբօսցնել.
Պարտիմ ներել ես խոստովանիլ

ԵԶԱ․ (մի և նոյն ձեւակերպութեամբ)

Տի՛կին, որաջքն ես ըլնէի,
Ցած ձայնով գլխ կշտամբէի,
Իմ հեզգութիւնս փասըն գլ
Յաճախ արգելք է ինձի,
Գոհ ըսելու համար ձեզի
Պարտիմ սանձել ես զանի ։

ԼՈՒ․ (աւելի ապահովութեամբ)

Ձեր երկուքին պէս
Ասկէ կ՛անցնէի . . .
Եւ նոյնպէս ալ ես
Կ՛աճապարէի ։

ՄԻԱՏԵՂ, միանգամայն զատ զատ ուրախութեամբ

Քննութիւն չ'եմ ըներ.

(Եղաբէլ) Վասն զի այս տեղը
Մեղ բան մը չ'արգիլեր,
Ըսենք մեր ողջոյնը,
Երթա՛ք բարով,
Երթա՛ք բարով:

(Երեքնին ալ իրենց առջի մտած տուներէն տարբեր տուներէ դուրս կ'ելլեն. Բօլօմպէն Եղաբէլի դըռնէն, Եղաբէլ ալ կողքի տունէն, Լուկրեցիա մառանաւենեանցին տունէն: Զայգանուագին կրկնումը կը լսուի. Անոնցմէ իւրաքանչիւրը մտածեր կը կայնին եւ իրենց վրայէն ծանր կերպով դուռը կը գոցեն:)

ՄԻԱՏԵՂ. սաստիկ կերպով կրկին իրենց դռները բանալով

Զայգանուագ մը՛...՛ մտիկ ընենք.
միտ դնենք.

Միտ դնենք, կապոյտ զեթեր
Պատեն աստղեր,
Սրփուէ զիւր քօղ իրիկուն:
Ականջ տանք զեթեր
Զոր պատեն աստղեր
Սիրահարներուն
Կ'ընդունի զերգուածներ:
Սակայն կը լռեն.
Լաւ ունկըն դընեմ...
Լըսեմ ոչի՛նչ,
Ալ ոչի՛նչ.
Ոչի՛նչ.

(Եղաբէլ եւ Բօլօմպէն դէպ 'ի պատուհանը կը դի-

մէն · Նորէն Լուսերեւոյթին կը հանդչին ու անշարժ կը կենան : Լռութիւն :)

ԼՈՒ · (արտմութեամբ) Ահա՛, յիրաւի՛, հետաքրքրութեան հաղուագիւտ օրինակ մը · Նաւակավարները ջրանցքին վրայէն երգելով կ'անցնին, կամ դիպուածով իրենց նաւակները մեր պատուհաններուն տակ կը կեցնեն. եւ իսկոյն դուք երկուքնիդ ալ մէկզմէկէ առաջ պատշգամը (Թէռացա) կը դիմէք . . . յիրաւի՛, նաւակավարի մը երգէն աւելի անսովոր եւ նորօրինակ բան . 'ի Վենետի՛կ :

ԵԶԱ · Բայց տիկին, այն երգը աւելի ցայգանուագի մը կը նմանէր :

ԼՈՒ · Ջայգանուագ մը՛, ի՞նչ ըսել է. դուն ձայգանուագ ընդունելու աղջի՞կ ես . կամ թէ Քօլօմպլին օրիորդը քաղաքը տարփածո՞ւ մը ունի, որուն մեր բնակարանը առակելու ամէն արտօնութիւնը տուած ըլլայ :

ՔՕԼ · Տիկին . . . .

ԼՈՒ · Վա՛չ, այս չ'կրնար ներուիլ, երբոր տան մը մէջ կը գտնուի կնոջմէ մը զատ՝ որուն համբաւոյն վրայ հոգ տանիլ հարկ էր, երիտասարդ աղջիկ մը՝ որ ամուսնանալու վրայ եղած ըլլայ :

ԵԶԱ · Աւա՛ղ :

ԼՈՒ · Դեռ ամուսնանալու գաղափարին վրայ կը հառաչե՞ս :

ԵԶՐ. Այո՛, ատոր գաղափարին վրայ:

ԼՈՒ. Եւ ի՞նչ բան ունիս ատոր վրայօք ըսելու, կ'աղաչեմ քեզի, տէր (սէնեէօռ) Բանթալօնը, ինչպէս որ ամէն մարդ գիտէ, Բօլօնիոյ հարուստ վաճառականներէն մէկը չէ՞ մի, եւ Լելիօ իր որդին կատարեալ ազնուականներէն մէկը... ինչպէս որ իւր հայրը կըսէ:

ԵԶԱ. Աստուա՛ծ իմ. տիկի՛ն, հայրերը ստամբակ չ'են, եւ ի՞նչ կարծիք կ'ուզես որ ունենամ երիտասարդի մը վրայ՝ որուն համար կամաւորութիւնը իւր ձեռքը չ'է ըսելով գովեստ մը ըրած կը կարծեն. թէ ինքը ուրիշին խօսքովը կը գտնայ. եւ վերջապէս որուն բաւական է գրել թէ՝ իրեն կին մը գտնուած է ամուսնանալու համար:

ԼՈՒ. Ասի ազնիւ բնաւորութեան մը նշանը չէ՞ մի:

ԵԶԱ. Ըսէ՛ մանաւանդ խելքի տկարութեան մը նշանը, որ անարժան հնազանդութիւն կը ցուցնէ, բան մը մերժել չգիտեր:

ՔՕՂ. Օ՛րիորդ, ատ բանին վրայօք մի՛ տրտնջար. մեքենայի մը պէս հնազանդող խօսնայր մը՝ այնչափ արհամարհելի չէ:

ԵԶԱ. Աւա՛ղ:

ԼՈՒ. Միշտ հառաչա՛նք. աշխատէ՛, ազնեգործէ՛, կարդա՛, երգէ՛, գուցէ այս քու գաղափարացդ ընթացքը փոխես:

ԵԶԱ. Փոխե՞լ. չեմ ուզեր փոխել տի՛կլին. դժբաղդ ըլլալ կ'ուզեմ ։

ԼՈՒ. Տրտնջալու իրաւո՛ւնք ունենալու եւ լսելու համար թէ, այս ամուսնութեամբ քու սիրոյդ արգելք կ'ըլլան կոր, իրաւացի բան է այս, յիրաւի՛, այս տեղէս հեռու հաստատուած սէր մը, 'ի մենաստան, 'ի Պատուա, առանց խնամակալիդ գիտնալուն . . . եւ որո՞ւ համար . . . այնպիսի երիտասարդի մը համար՝ որուն անունն անգամ չգիտես ։

ԵԶԱ. Բայց աս յայտնի է թէ . . . բարի ընտանիքէ մը եղած պիտի ըլլայ ինքն անշուշտ . . . որովհետեւ ընտիր է 'ի վարս, անձամբ ալ վայելուչ ։

ԼՈՒ. Ապա ուրեմն, դուք զինքը նկատելու պատեհութիւն ունեցած էք ։

ԵԶԱ. Ո՛հ չէ թէ կամայաբար, բայց ինքը որովհետեւ այնչափ ժամանակ նոյն տեղը կը կենար .

## ԵՐԳ ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ

### ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Ընդ հին որմովք էր մատուռն
Ի տես ոգին (ուրուական) հաւատարիմ
Թափառիլ չարունակ
Զառաւօտ եւ ըղյայգ ։
Թէ կիւրակէ օրն յաղօթըս
Ամբառնայի մերթ աչերըս . . .

Հո՛ն էր նա ,
Աչօքն ինձ հետ խօսեցաւ նա ։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Գըրտնէր գլխս այդ ճաճանչաւոր
Միտքս ըզբաղած ու մտախորհ
Գըլուխըս ըռքողած
Ու միտքըս խըռոված .
Եւ երբոր խիստ հըրաման քերց
Մենաստանին մուտքն արգիլեց . . .
(յետոյ կուրծքէն վրայ դնելով)
Ջո՛ն էր նա ,
Քաղցըր դէմքը հոս պիտի կենայ ։

ԼՈՒ . (հեգնութեամբ) Ասի վիպասանու-
թի՛ւն մ՚է ։

ԵԶԱ . Բայց բանը շատ դէշ վերջաւորու-
թիւն մը ունեցաւ . . . ո՛հ , ի՛նչ եղաւ ան ժա-
մանակը , որ ատեն ամեն իրիկուն , հրեշտա-
կային ողջունատուութենէն* (անժէլիւս) ետքը
կը գտնէի կուսաստանին կանաչ վանդակա-
պատին կղպանքին ծակին մէջ անուշահոտ-
եալ պզտիկ տոմսակ մը՝ որ ինծի իրեն վրայօք
կը խօսէր . ի՛նչ ուրախութեամբ զանի կը կար-
դայի , կամ թէ աւելի աղէկ է ըսեմ , զանի
կը կարդայինք , վասն զի ան ձեռքէ ձեռք
կ՚անցնէր , եւ իւրաքանչիւր դասին զարմանք

---

* Աղօթք ։

կը պատճառէր . ա՛հ ո՛րչափ սիրելի էր , ու քանի գրողն ալ ո՛րչափ ազնիւ եւ յարգելի կ'երեւար . իր վերջին նամակին մէջ զիս կուսաստանէն հանել կը խոստանար . այն ժամանակը եթէ աս խոստմունքը ընդունէի՝ աղէկ բրած պիտի ըլլայի ։

ԼՈՒ. Ի՞նչ կը լսեմ ։

ՔՕԼ. (առանձինն, խնդալով) Տե՛ս անկեղծը ։

ԵԶԱ. Այո՛, փախուստը գերութեան մէջ նախամեծար է , եւ իր սէրը ինձ աւելի մեծագին քան այն երիտասարդին՝ որ զինքն ես չեմ ճանչեր , եւ ոչ դուք , ու ոչ ոք ալ հոս . . . . որ կարելի է թէ տգեղ ըլլայ . . . . չեմ ամուսնանար անոր հետ՝ եթէ տգեղ է ։

ԼՈՒ. Պայմա՞ն կը դնէք ձեր հաւանութեանը մէջ ։

ԵԶԱ. Կը դնեմ այս պայմանը ։

ԼՈՒ. Գլո՞ւխ կը քաշէք կոր ։

ԵԶԱ. Այո՛, գլուխ կը քաշեմ կոր ։

ՔՕԼ. Ահա՛ պարոն Բժիշկը ։

## ՏԵՍԱՏԱՆ Բ.

*Նոյները . ԲԺԻՇԿԸ ներս կը մտնէ բազմաթիւ սրուակներ ունենալով թեւին տակ . ձեռքն ալ ուրիշ դեղի սրուակ մը բռնած՝ որուն մէջն եղածը կը զննէ ։*

ԼՈՒ. Իսկ ա՛րդ , պա՛րոն , եկէ՛ք , եկէ՛ք , բարի օրինակ եղող բաներ պիտի լսէք , եւ

գուցէ զձեզ պիտի գրգռեն, թէպէտ եւ ճըշմարիտը խօսելով՝ զձեզ ձեր սովորական անդգայութենէն հանելը դիւրին պիտի չըլլայ։

ԵԶԱ. Խնամակալ իմ, ձեզի բանը պիտի բացատրեմ... երաժշտութեան ձայն կը լսէի, հոս եկեր էի, ու հոս գտայ...

ԼՈՒ. (ոյժգին ներքուն) Բանն ատոր վրայ չէ. ձեզի՝ ինչ լսերինիդ ու ինչ գտներինիդ հարցընող չկայ. ձենէ կ'ուզուի որ քիչ մը առաջ ինձ այնչափ յանդգնութեամբ զրուցած խօսքերնիդ նորէն կրկնէք. (Եր Երեւանը) պիտի տեսնէք պա՛րոն, (Եղաբելին) լա՛ւ, խօսեցէ՛ք. (Եր Երեւանը) պիտի տեսնէք, կը լսէ՞ք։

ԲԺԻՇ. Ի՛նչ, արդեօք կը լսե՞մ, այո՛ յիրաւի, (ընչներէն, դեղին օրոտակը գիննելով.) երկու ունկի ճերմակ մեկոն (բաւօ պլան).. գառեալ հազար (լէթիւ տխաթիլէ)...

ԼՈՒ. (Եղաբելին) Իսկ արդ, օրիո՛րդ... արդէն խորհուրդնիդ լմնցուցի՞ք։

ԵԶԱ. Ո՛չ տիկին, ո՛չ, ապահով եղիք։

ԼՈՒ. Ինչո՞ւ համար հիմայ չէք զրուցեր կոր։

ԵԶԱ. Բայց աճապարելու բան չ'ունիմ, կ'ըսէի։

ԼՈՒ. Ի՞նչ կ'ըսէիք...

ԵԶԱ. Այո՛, կ'ըսէի, աղէկ պիտի ընեն, չի պիտի կարենան իմ անոր համար ունեցած

մէջս փոխելու, եւ ինչ պատճառ որ իմ աչքիս առջին գնեն զանի մոռնալու, անոր հաւատարիմ պիտի կենամ, որչափ որ կրնամ։

ԼՈՒ. (Բժշկին դառնալով) Կը լսէ՞ք։

ԲԺԻՇ. Ըսածը գէշ չէ... որչափ որ կարենայ... ալ անոր հարցնելու հարկ չկայ։

ԼՈՒ. Բայց որո՞ւ վրայօք կը կարծէք որ կը խօսի կոր ինքը։

ԲԺԻՇ. Տէր Բանկթալօնին որդւոյն վրայօք։

ԼՈՒ. Բարէ՛, ո՛չ, այն երիտասարդին վըրայօք կը խօսի՝ որ ինքը կուսասանը տեսած է, 'ի Պատուա։

ԲԺԻՇ. Ո՛հ... ին վրայօք. (Ինքնիրեն) բանգ (ժիւագիամ, պան օթու), ականիտոնը (աքօնիտում ինչ թունաւոր)... կարծեմ թէ ասոնցմէ շատ գրի... եթէ փոխանակ քնածու դեղի՝ թոյն մը չինեցի... (Ռեցեպտները յանձ նող-մի գրասեղանին վրայ կը դնէ։)

ԼՈՒ. (Ածելոյն սրտմտութեամբ մը) Շատ աղէ՛կ... ա՞յս է ձեր գտած խօսքը... ա՞յս է այսպիսի անամօթութեանց տուած պատասխանիդ։ Յիրաւի, փոխանակ դեղերնուդ զբաղելու՝ որ հարցնող, ուզող չկայ, փոխանակ փիլիսոփայութեան, աշխարհագրութեան, աստղագիտութեան ինչ գիտնամ... գրքերուն մէջ թաղուելու, աւելի աղէկ պիտի ընէիք՝ եթէ ձեր տանը զբաղէիք,

(19921
28324-62

եւ անգամ մը անոր մէջ տէր ըլլայէք ։ Ո՛հ, ահա ես կ'երթամ, վասն զի քեզ հետ՝ մարդ իւր բարի բնաւորութիւնը զանց կ'ընէ, եւ իւր համբերութիւնն ալ կը տաղտկանայ ։

ՔՕԼ. (առանձին) Պարոնը շատ դիւրագըրգիռ է, բայց բանը ան է թէ՝ որո՛ւ հետ վիճելու հարկաւորութիւն ունի ։

ԼՈՒ. (Եղիսաբէթին) Գէթ կը յուսամ թէ, օրիորդ, ձեր զգացմունքներդ տէր Բանթալօնին առջեւ պիտի ծածկէք, որ այսօր իսկ իր որդին ու զինքը կ'սպասենք ։ Քեզի առաջուց կ'ըսեմ, անկէ ետքը ինչ որ ալ ըլլայ, ստահակութիւննիդ չպիտի կրնաք առաջ տանիլ, վասն զի զանի սանձահարելը մինակ իմ վրաս պիտի առնեմ. Քօ՛րմիլին, գանք քեզի ։

ՔՕԼ. (ինքնիրեն) Կարգն ինծի եկաւ ։

ԼՈՒ. Ինչպէս որ բարի խրատ տուող ու մանաւանդ բարի օրինակ եղող անձինք կ'ուզեմ քովս պահել, լաւ 'ի միտ ա՛ռ թէ ես սիրահարներ չ'եմ ուզեր. ուստի եթէ կասկած մ'ունենամ որ դուրսին հետ քու կողմանէդ ծածուկ սիրոյ յարաբերութիւն մը եղած է, առաջին նշանն երեւալուն, ինչ որ ալ ըլլայ՝ զքեզ քովէս պիտի ճամբեմ ։ (Դուրս ելնելու ատենը Բժշկին) Ո՛հ, պարոն, եթէ այսչափ քաղցրաբարոյ չըլլայի . . . ի՛նչ համբերութիւն պէտք է ունենայ ձեզի հետ եղող մարդը, ի՛նչ համբերութիւն ։

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԲԺԻՇԿԸ, ԵԶԱԲԵԼ, ՔՕՂՕՄՊԻՆ

ԲԺԻՇ. (Իւր կնոջը դուրս ելնելը տեսնելով.) Այսօր իր առողջութիւնը շատ աղէկ չ'է. (չախ կողմը դէպ 'ի ընդարձակ պահարանի մը կը մօտենայ՝ որ ամէն տեսակ սրուակներով լեցուն է. քա-նի որ Եզաբէլ և Քօղօմպին տեսարանին մէջ տեղը երկարօրէն կը խօսին.)

ՔՕՂ. (շարամասնաբար) Ցիրաւի, կարծեմ թէ հիմա մեր ներկայութիւնը տարօրինակ կերպով Լուկրետիային հակառակ երեւցաւ.

ԵԶԱ. (հանդոյով) Ըստ այդ կարծեաց, իր ներկայութիւնը ինձ ալ եւս անհաճոյ պէտք եղաւ որ երեւայ, զի վերջապէս գուցէ ինքն էր որ մեր պատուհաններուն ներքեւ կ'երգէր, որպէս զի վայրկեան մը զիս պատշգամին մէջ տեսնէ.

ՔՕՂ. Հաւանական չէ, որ ձեր բնակութիւնը այսպիսի քաղաքի մը մէջ գտնայ.

ԵԶԱ. Կ'ըսեն թէ՝ սէրը զիւրահարները հնարագիտ կ'ընէ, եւ իմս լի է երեւակայութեամբ.

ԲԺԻՇ. (աթոռի մը վրայ ելած, շարունակելով իր պահարանին մէջ ըրած խուզարկութիւնը.) Քօ- ղօմպի'ն, սա սրուակն ինծի անցո'ւ.

ՔՕՂ. (տեսնելով որ շիշը կը փնտռէ, գտնելը կը

դարձնէ ; նոյնպէս եւ Եղաբէլ, եւ առանց բժշկին ըս-ածներուն ականջ տալու, խօսքը կը շարունակէ․)
Սակայն ձեր սիրահարը Պատուա է։

ԵՂԱ․ Չը՞ կրնար ըլլալ՝ որ իմ եռանդս վէ-նէական եղած ըլլայ։

ՔՕԼ․ Ինծի ըսի՞ք թէ պիտի ամուսնանայ։

ԵՂԱ․ Այո՛, ինքն հակառակ իր կամացը․․ կ'ուզեն զինքն ամուսնացնել․․․ այնպիսի մէ-կու մը հետ՝ որ ինքը չ'ճանչեր, եւ անունն ալ իրեն չ'են զրուցած․․․ ո՜հ, հայրերուն եւ խնամակալներուն անգթութիւնը․․․ բայց ինքը ինծի պէս պիտի ընէ․ դէմ պիտի դնէ, պիտի մերժէ․․․ ու զիս պիտի փնտռէ․․․․

ԲԺԻՇ․ Քօլօմպի՛ն, տո՛ւր ուրեմն ինձ սա սրուակը․ (Նախընթաց մի եւ նոյն դեղարանէն խաղը)

ԵՂԱ․ Այո՛, զիս պիտի՛ փնտռէ․ ահա դուցէ ես քեզի անիմաստ խօսքեր կ'ըսեմ կոր․ բայց երէկ խնամակալիս կնոջը հետ՝ եկեղեցիէն դուրս ելած ատենիս, կարծես աչքիս դպաւ թէ հեռուէն երիտասարդ մը մեր ետեւէն կուգար․ եւ այն երիտասարդը ինձ թուեցաւ թէ ինքն էր։

ՔՕԼ․ Ա՞յն ձիաւորը՝ որ Սէն—Մառի հը-րապարակէն վերադարձին, Քառլէնի մօտե-ցաւ, որ ատեն ինքը զիս կ'ողջունէր,

ԵՂԱ․ Գեղեցիկ չէ՞ մի։

ՔՕԼ․ Օրիորդ, ես մարդուն երեսը չ'եմ

նայիր . . . մոռնալանդ այնչափ հեռուէն . . . բայց ինծի վայելուչ երեւցաւ ։ (Դուռը կը զարնեն, երկու կիները ականջ կուտան ։)

ԲԺԻՇ. Կարծեմ թէ մէկը մեր դուռը կը զարնէ, Քօլօմպի՛ն գնա՛ նայէ՛ ։ (Նախընթաց մի եւ նոյն տեսարանին խաղը ։)

ԵԶԱ. Ի՞նչ, Բալէնի՞ն մօտեցաւ, ան զինքը կը ճանչէ՞ կոր, եւ դուն անոր վրայօք բան մը չգիտե՞ս որ ինծի գրուցես ։

ՔՕԼ. Օրիո՛րդ, պարոն Բալէնին եւ իմ մէջ այնպիսի սիրոյ պաղութիւն մը կայ, որ ես իրեն հետ չեմ խօսիր ։

ԵԶԱ. Իրա՞ւ, ի՜նչ դժբաղդութիւն ։

(Դուրսէն դուռը կը զարնուի ։)

ԲԺԻՇ. (ինքնիրեն) Կ'երեւայ թէ չ'գնաց ։

ԵԶԱ. Բայց ուստի՞ է . . .

ԵԶԱ. (արտասուքը սրբելով) Անօգնական մնացած եմ ։

ԲԺԻՇ. (ինքնիրեն) Կարծեմ թէ աւելի աղէկ պիտի ընեմ, եթէ ես բանամ ։(Դուռը կ'երթէ ։)

## ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԵԶԱԲԷԼ. ՔՕԼՕՄՊԻՆ.

ԵԶԱ. Ի՞նչ պատճառաւ անօգնական մնացած էք ։

ՔՕԼ. Անօգնական մնացա՛ծ . . . իւր մէկ հօրեղբօրը ժառանգութիւնը առնելէն 'ի վեր ,

որ կղզիներուն շաքարեղէնի ու քաղցրաւենիի վաճառականն էր, ան ճիւաղը անոր ինչքը ա-ւանց ինծի ուտելու ետուէ է... (լալով) ին-ծի ժառանգութիւնէն յիշատակ մը չը խրկեց։ Ո՛հ օրիորդ, սա՛պէս, սա՛պէս է բանը։

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Սիրահար մը երբ աւինում՝
Պատմէ մեզ իւր սէրն ու գորով,
Ջուարճացընէ մեզ ու դրդուէ ձայնը ·
Իրեն սիրոյն սաստկութեանը ·
Կոչէ վրկայ երկինքը ։
Սակայն փափուկ խօսքեր իսկոյն
Փախչի, որանոյ քաղցըր երգում ։
Ո՛չ, ո՛չ վասըն սիրոյ մը
Որուն օր մ՚է անուածը,
Խիստ դառըն է տառապիլը ։
Ո՛չ, սէրը քանզի
Ա.յսօր կը մեռնի,
Գոնէ ըլլանք, ո՛հ, անվեհեր ·
Պաշտպանենք մեր սըրտեր
Սուտ եռանդէ մը,
Կամ ասկէ ետքը,
Սիրենք մենք եթէ
Սիրածնիս օր մ՚է ։

ԵՐԳ ԵՐԿՐՈՐԴ

Ինծի կ՚ըսէր, քեզ որ խնդրեմ,

Սիրեմ է քեզ, կ'երկըրպագե՜մ.
Դիւրհաւանութեամբ կ'ընէի մըտիկ,
Կիզիչ խօսքերն այս ու քաղցրիկ,
Մեզ համար միշտ նորալիկ :
Այլ, ո՛հ, անգո՛ւթ խաբէութիւն,
Երազ մ'էր իմ երջանկութիւն :
Ո՛չ, ո՛չ, վասն սիրոյ մը,
Որուն օր մ'է տեւածը,
Խիստ դառըն է տառապելը :
Ո՛չ, սէրը քանի
Այսօր կը մեռնի,
Լալով, ըլլանք անվեհեր
Պաշտպանենք մեր սրտերն
Սուտ եռանդէ մը,
Կամ ասկէ ետքը,
Սիրենք մենք եթէ
Սիրածնիս օր մ'է :

## ՏԵՍԱՐԱՆ Ե.

ԵԶԱԲԵԼ, ՔՕԼՕՄՊԻՆ, ԲԺԻՇԿԸ, և ապա երկու բեռնակիրները ներս կը մտնեն ծաղիկներով ու ժապաւէններով զարդարուած կողովով մը, զոր կը տանին անոր ճարմանդներուն մէջէն անցուցած երկու գաւազաններու միջոցաւ : Այս և հետեւեալ տեսարանին մէջ երաժշտութիւն 'ի կայանս երաժշտաց :

ԲԺԻՇ. Բօլօմպի՛ն :

ՔՕԼ. Պարո՛ն :

ԲԺԻՇ. Ձեզի համար է, զաւակս, այս ձե-զի կը վերաբերի :

ՔՕՂ. Ինծի՞ համար, պարո՛ն :

ԲԺԻՇ. Այո՛, ձեզի համար . . . զձեզ կ՚ու-զեն :

ՔՕՂ. Ո՞վ, պարոն :

ԲԺԻՇ. Տե՛ս աղէկ . . . մարդիկը . . . (բեռ-նակիրներուն ներս մտնելը տեսնելով) աս՛ մարդիկը։

Բ. ԲԵՌ. (իր ընկերին) Զգուշութեամբ քա-լէ . . . ու դռնէն ալ զգուշացիր, (Յանկար-ծակի տեսարանին մէջ եղող անձինքը կը տեսնեն, և վայրկեան մը տարակուսելէ վերջը, խորհրդաւոր մինչև բազմոցին կը մօտենան, հոն իրենց բեռը կա-մացուկ մը վար կը դնեն :)

ԵԶԱ. ու ՔՕՂ. (լռութենէ մը ետքը.) Ո՛հ, ի՞նչ է ասիկայ. (բեռնակիրները կողովը վար դը-նելէն ետքը, կ՚երթան ու վայրկեան մը իրարու-հետ կը խորհրդակցին, առաջինը իւր ու փողոնէ մը ունի իր [illegible] մէջ՝ մէկ մը Եղաբէլին կը նայի մէկ մը Բօլօմալիին, որ ասէն ետև ընկերը մատայ կերպարանքով մը բժիշկին կը նայի, և անոր աչքո-վը նշան կ՚ընէ որ մեկնի, բժիշկն ուղղակի ալ եր-կու կինները աւելի մեծ զարմանքով մը դիտելով կը դիտեն :)

ԲԺԻՇ. (առանձին) Ահա՛ տարօրինակ անձինք։

Ա. ԲԵՌ. (աւելի խորհրդաւոր կերպարանքով մը) Օրիորդ Բօլօմալի՛ն :

ՔՕՂ. Ես եմ։

Ա. ԲԵՌ. Ապա ուրեմն աս ձեզի ուղղուած է։

ՔՕՂ. Հաւանականաբար կը սխալիք։

Ա. ԲԵՌ. Ո՛հ, ի՛նչպէս ոչ... Թիրիխթօֆօլօ բժշկին տունը... (Բժշկին նայելով) աս սա՛ եղած պիտի ըլլայ... Ուխալթօյի ջրանցքին եզերքը՝ ձախ ձեռքիդ վրայ երկրորդ տունը։

ՔՕՂ. Բայց աս ո՞ր կողմէն խրկուած է. գիտէ՞ք արդեօք թէ աս կողովին մէջ ի՛նչ կայ։

Ա. ԲԵՌ. (Փաղփանու-թեամբ ու պօտարըն դէմքով) Ինչպէս որ յայտնի է, վաճառատան մը ապրանքը։

ՔՕՂ. (ոյժգին) Վաճառատա՛ն մը։

ԲԺԻՇ. Աս խօսքով կրնա՞ք հասկընալ ո՛ր կողմէն եկած ըլլալը։

ՔՕՂ. Վաճառատա՛ն մը, ո՛ւսկից կուգայ աս։

Բ. ԲԵՌ. (Բ ևս նոյն ըսփայծռանով) Շաքարագործի խանութէ մը...

ՔՕՂ. Մե՞ծ ջրանցքին անկիւնը։

Ա. ԲԵՌ. Աջ ձեռքիդ վրայ։

ՔՕՂ. (ուրախութեամբ) Բառլէնի՛ կողմէն։

ԵՁԱ. Բառլէնի՛ կողմէն... կը տեսնէ՞ք որ զձեզ չ՛է մոռցեր։

ԲԺԻՇ. (խօտէ–) Բառլէ՛ն, ո՞վ է այդ Բառլէնը, օրիո՛րդ։

ՔՕՂ. Աս իր կողմէ՞ն է։

ԲԺԻՇ. Դո՛ւք ընծա՞յ կ'ընդունիք։

Ա. ԲԵՌ. (ցած ձայնով Քօլօճոյենին, յետոյ նա-մակ մը տալով.) Ասկէ զատ նամակ մ'ալ՝ որ ինծի ըսին թէ գաղտնի քեզի տամ։

ԲԺԻՇ. Նամակնե՛ր ալ։

ՔՕՂ. (նամակը խլելով Եղաբելէն յետոյ ա-հեցնելով) Ի՞նչպէս նամակ, ես, պարոն, կը տեսնէք թէ ոչ. (Ձախ կողմի սենեակէն մէջ զան-գակի ձայն կը լսուի։)

ԲԺԻՇ. Լռեցէ՛ք, զաւակս, ետքը ինծի պա-տասխանը պիտի տաք. հիմայ կինս զիս կը կանչէ։

ՔՕՂ. Երկի՛նք, տիկի՛ն, եթէ նա իմանա՛ր։

ԵԶԱ. Եթէ նա հոս գտնուէ՛ր...

ՔՕՂ. Քիչ մը ժամանակ առաջ ինծի այն-չափ խօսք գրուցելէն վերջը՛... (Բեռնակիրնե-րուն) Շո՛ւտ, մեկնեցէ՛ք։

ԲԺԻՇ. Ո՛ն, մեկնեցէ՛ք։

ՔՕՂ. Ձեր վարձքը պիտի վճարեմ։

ԲԺԻՇ. (քսակը անոնց նետելով) Ահա՛ քսակս։

ՔՕՂ. Փախէ՛ք։

ԱՄԵՆՔ. Փախչի՛նք։ (Քօլօճոյէն բեռնակիր-ներուն հետ մէկտեղ սանդուխը տանող դուռէն կը փախչի. Եղաբէլը — Բժիշկն ու ձախ կողմի երրորդ սենեակին վրայի դուռէն։)

## ՏԵՍԱՐԱՆ Գ.

ԼՈՒԿՐԵՏԻԱ եւ ապա ԼԷԼԻՕ.

ԼՈՒ. (Պէտ 'ի հասարակութիւնը նայող ձախ կողմի դռնէն ներս մտնելով ու խանչելով.) Քօլոմ-պի՛ն . . . Երբէ՛ք հոն չգտնուիր. (ինքնիրեն, լռութենէ մը ետքը.) որո՞ւ համար էր այն ձայ-գանուագը, եւ այն երիտասարդը երեկ մեր տունէն գալով ի՞նչ ընել կ'ուզէր. չ'եմ կար-ծեր որ երբէ՛ք մէկուն յանցաւոր յոյսեր յղա-նալու իրաւունք տուած ըլլամ. փառք Աս-տուծոյ, իմ վարքս . . . (Վայրկեան մը խորհրդա-ծելէ վերջը) Ա՜ն երիտասարդը բարի մարդ-մ'է, ինքը երկչոտ կ'երեւար, որովհետեւ ակ-նածութեամբ հեռուէն մեր տունէն կուգար . . . (կողովը տեսնելով) ի՞նչ է աս . . . կողով մը մեղրի խոկեր են. (կողովէն խուրձը կը վերցնէ, ու շլեւլէօն տեսածին պէս ճիչ մը կ'արձկէ) մա՛րդ-մը . . . ո՞վ ես դուն, պա՛րոն. հոդ ի՞նչ բան ունիս . . . :

ԵՐԳ.

ԼԷԼԻՕ. Կը սիրե՛մ,
Կը սիրե՛մ,
Գիշեր, ցորեկ, միայն ձայնս է.
Կը սիրե՛մ,
Կը սիրե՛մ,
Քանի ըղձէր իմ ոչինչ մեծ է:

Կը սիրեմ,
Կը սիրեմ,
Եւ այս սաստիկ զառանցանք
Հրապոյրք մ'է, փոփոխակի ու տանջանք։

ԼՈՒ. (խօսելով) Ո՞վ ես դուն։

ԼԻԼ. Մի՛ հարցներ ինձ, տիկին մէկ բան մը,
Գըլթա՛ իմ սրտիս խըռովութեանը։

ԼՈՒ. (խօսելով) Բայց . . .

ԼԻԼ. Այո՛, դուք գիտէք, հերիք է սա՛
Իմ ինչո՞ւ գալըս ըսի ես ձեզի։

ԼՈՒ. (խօսելով) Բայց ո՛չ, պարոն։

ԼԻԼ. Ո՛հ, թո՛, յիրաւի՞,
Այս տարբե՞ր է, բան մը չըսի՛.
Կը սիրեմ,
Կը սիրեմ,
Գիշեր, ցորեկ, իմ միայն ձայնս է։
Կը սիրեմ,
Կը սիրեմ,
Քան ըզգալը իմ ոչինչ մեծ է.
Կը սիրեմ,
Կը սիրեմ,
Եւ այս սաստիկ զառանցանք
Հրապոյրք մ'է փոփոխակի ու տանջանք։
Կը սիրեմ,
Կը սիրեմ,
Այո՛, սաստիկ այս զառանցանք
Հրապոյրք մ'է, երջանկութիւն փոփոխակի
ու տանջանք։

ԼՈՒ. (ինքնիրեն) Ասի մեր ետեւէ՛ն եկող ձիաւորն է.... (բարձր) Պարո՛ն.... մարդոց տունը մտնելու այս հնարքը... գինքը յայտնելու... ինծի մեծ երկիւղ կը պատճառէք, պարո՛ն։

ԼԻԼ. Ասի գիս չ'զարմացներ, տիկի՛ն... Այո՛, ես յանդուգն երիտասարդ մ'եմ, որ ամէն բան յաջողելու համար ներելի կը կարծեմ, եւ ինծի բան մը արգելք չ'ըլլար։

ԼՈՒ. (առանձին) Ի՛նչ ժպրհութիւն.

ԼԻԼ. Քիչ մը բան կաշառք տուի.. գրեթէ ոչինչ, անանկ մարդու մը որ ձեր բնակարանը գիտէ... եւ այս տանը մէջ եղողներուն հետ ալ յարաբերութիւն ունի... ան գիս այս ուրիշ կողմին մէջ մտցուց... ան գիս խրկեց... չգիտեմ ինչ բանի ծրարի մը պէս. բայց ինչի կ'ըլլայ նէ ըլլայ՝ իմին ինչո՞ւս պէտք էր. իմ կամքս այս աշտարակը մտնել էր, որ իմ սիրուհիս ինծմէ կը ծածկէ՞։

ԼՈՒ. Պարո՛ն. (առանձին) յայտարարութի՛ւն մը։

ԼԻԼ. Իմ միտքս՝ անոր շնչած օդը շնչել, զանի տեսնել... զանի ասկէ հանել էր։

ԼՈՒ. (շարժուածքով) Պարո՛ն։

ԼԻԼ. Մի՛ այդչափ բարձր, տիկի՛ն... կ'աղաչեմ ձեզի։

ԼՈՒ. Շատ աղէկ, ո՛չ, պարոն... մարդ

չ'արգողեր, մարդ չ'ուզեր որ . . . հող մ'ընէք. (առանձին) Ի՜նչ սաստիկ եռանդ :

ԼԷԼ. Ինծի գործակից պիտի ըլլա՞ք :

ԼՈՒ. Ձեզի բաւական է գիտնալ, որ ես բանս չ'պիտի հռչակեմ. . . . ես գաղտնիքը պիտի պահեմ. . . ձեզի պիտի օգնեմ իսկ . . .

ԼԷԼ. Սիրելի՜ տիկին :

ԼՈՒ. Ասկէ դուրս ելնելու :

ԼԷԼ. Ի՞նչ :

ԼՈՒ. Գրաւ կը դնեմ, ինչպէս որ հոս մըտաք՝ նոյն կերպով : Ձեր ուզած տեղը զձեզ տանիլ պիտի տամ՝ առանց մէկը ձեր հոս գալը գիտնալու . . . կ'երդուիմ էրկանս գըլխուն վրայ . . . կրկին սըվոր մէջը մտէք :

ԼԷԼ. Ա՞ս կողովին մէջ :

ԼՈՒ. Կրկին մէջը մտէք :

ԼԷԼ. Բայց տիկի՛ն, չգիտէք մարդ ասոր մէջը ինչպէս է, հազիւ թէ երկուք ծրարուած մէջը կրնայ կենալ :

ԼՈՒ. Այդպէս ըրէ՛ք, ասոր մէջը :

ԼԷԼ. Երբէ՛ք :

ԼՈՒ. Ուրիշ ճար չկայ, եթէ մէկը տեսնէ՛ դուրս ելնելնիդ :

ԼԷԼ. Բայց ես միայն կ'ուզէի . . .

ԼՈՒ. Մընա՛լ. . . այս յոյսը յղացեր է . . . մտածեցէք . . . ձեր սիրուհւոյն ու անոր համբաւոյն վրայ :

ԼԷԼ. (մօտենալով) Տիկի՛ն, մինակ իմ սի-
րոյս, մինակ ինձ ներկայացող պատեհութեան
... վրայ կը մտածեմ։

ԼՈՒ. (զարհուրանքով) Սրտին մէջը մտէք, կ՚ըսեմ կոր, պա՛րոն... ապա թէ ոչ՝ կը պո-
ռամ, կը կանչեմ...

ԼԷԼ. Մի՛ պոռաք, Աստուծոյ համար ըլլայ՝ մի՛ պոռաք, տիկի՛ն... եթէ անշուշտ դէմ կե-
նաք, եթէ պահանջէք... (ոտքէ վրայ կողովին մէջը կը մտնէ. լուսաբենէ մը երգը.) անզգա՛մ էք, տիկի՛ն։ Ձեր կրկին խրկել... եւ ասոր մէջը ... (յանկարծակի ինքնիրեն գալով.) թէպէտ եւ կընայիք զիս դիւրութեամբ երջանիկ ընել։

ԼՈՒ. (ազնուական կերպով) Պարո՛ն։

ԼԷԼ. Վերջապէս... (Նորէն կը կողովին մէջէ տեղաւորուի, յետոյ գրպանէն թուղթ մը կը հանէ ու Լուկրեցիային կուտայ.) Հաճեցէք զիս այս թուղ-
թով մեծ ջրանցքին անկիւնը տանել տալու։

ԼՈՒ. Այո՛, պարոն։

ԼԷԼ. Պատուիրէ՛ մանաւանդ, որ զիս հոս բերածնուն պէս գլխիվար չթափեն։

ԼՈՒ. (խորէր գոչելով) Հոգ մ՚ընէք, պա-
րոն, ես կը նայիմ, ես ինքս կ՚երթամ բերե-
լու ան մարդիկը որ... (առանձին) Ո՜հ, ի՜նչ տեսարան, ի՜նչ դէպք, ի՜նչ սէր։ (Արագու-
թեամբ կը հեռանայ մառանատնեակէն դուռնէն՝ որ բաց կեցած է։)

## ՏԵՍԱՐԱՆ Է.

ԼԷԼԻՕ, *նորէն իր Թաքստոցէն դուրս ելնելով։*

Ինչպէս որ եկայ, այնպէս երթա՛լ, առանց զինքը տեսնելու, առանց իսկ իրեն հետ խօսակցելու... ո՛հ, ո՛հ, ո՛չ... թող մէկը ամենուն միջէն չ'անցունէ. անշուշտ ասոր մէջ իմ տեղս դնելու բան մը պիտի գտնեմ։ Յիրաւի, ահա մառանասենեակը. սկաւառակներ, տափակ ամաններ, շատ աղէկ. (Կ'երթայ որոշած բաները առնելու, և կը դնէ բազմոցին քով եղող պզտիկ աշտանակալին վրայ.) Այս կողմէն (Ձախ կողմի գրասեղանին կը նայի.) շիշե՛ր. (Բժշկին հոն դրած երկու տեսակ օշարակներէն կ'առնէ, յետոյ զանոնք կողովէ մէջ դնելու ատեն յանկարծակի կանգ կ'առնէ.) Եթէ տեսնելու ատեն ասոնք իրարու զարնուելու ըլլան..., (Գրասեղանին ու բազմոցին վրայ եղած գրքերը տեսնելով.) Ո՛հ, հա՛, գրքեր... (Ձեռքը եղած օշարակներն ու շիշերը, նոյնպէս ալ ամանները մառանասենեակը կը տանի ու դուռը կը գոցէ. յետոյ բազմոցին վրայ եղող գրքերուն կը դիմէ.) Ահա՛ իմ ընկերս. Պլուտարքոս, քառածալ... ամբողջ Սենեկայ... Պղատոնի փիլիսոփայական գիրքը... Արիստոտէլին կենդանիներուն հետ... (Այն ամէն գրքերը [illegible] կողովին մէջ կը դնէ.) Պիտի խաբուին. հիմայ թող ուզած

ատեններն առի վերցնել տան. խակ ես ան ժամանակը դժբաղդ պիտի ըլլամ, եթէ յարկէ յարկ, սենեակէ սենեակ ինծի ասկէ աւելի կանոնաւոր դարան մը չ'գտնեմ, կամ ինձմէ զատուած սիրուհիս չ'գտնելու ըլլամ։ (Չորս կողմը կը նայի թէ որ կողմէն դուրս ելնէ, վերջապէս դէպ 'ի հասարակութիւնը նայող ձախ կողմի դուռը կ'որոշէ, յետոյ ապահով ըլլալով՝ որ Թէկը շիտակը չկըր-նար տեսնել, դուրս կ'ելնէ։)

## ՏԵՍԱՐԱՆ Ը.

ՔՕՂՕՄՊԻՆ, տեսարանին ներսի կողմէն զգուշութեամբ ներս մտնելով. քիչ մը ետքն ալ ԲԺԻՇԿԸ։

ՔՕՂ. Տիկինը ալ հոն չ'է . . . վերջապէս երակներուս մէջ կաթիլ մը արիւն չ'մնաց. ի՞նչ բան պիտի ըլլայ արդեօք Թաւլէնին ալ խորկած ընծան տեսնելով։ Ո՛հ, եթէ զասխտե-սած չ'է, եթէ ժամանակին է. շուտով զատ պահենք . . . (Կողովը դէպ 'ի մառանատեղնեակը տանելու կ'աշխատի։)

ԲԺԻՇ. (ներս մտնելով, ինքնիրեն) կարծեմ թէ ես ալ աղէկ ըրի որ մեկնեցայ. (Քօղօմպինին) ի՞նչ է ադ, զաւակս, ի՞նչ կ'ընես հոդ։

ՔՕՂ. Բայց պարոն, ահա կը տեսնէք որ վերցնելու կ'աշխատիմ . . . եթէ տիկինը այս կողմը տեսաւ՝ կորսուեցայ գնաց։

ԲԺԻՇ. Ո՛հ, ահա աս ալ աղէկ եղաւ. ինչո՞ւ կ'ընդունիք…

ՔՕԼ. (Միշտ ենթալենքը անօգուտ ջանքերով մաքրելով) Աւելի կը պարտաւորէիք ինծի օգնելու, պարոն:

ԲԺԻՇ. (անոր ուզածը հասմայ հասմայ ու մեքենապէս ընելով) Ե՞ս, բարե՛, հետաքրքրական բան պիտի ըլլար… յետ այսօրիկ դուք զանի պահելու իրաւունք ունիք, կը տեսնէ՞ք… աւելի իմաստուն է: Ինքը ազնիւ է, կին իմ. բայց… եւ ապա այս անգամ, դուք իրաւունք չ'ունիք, զաւակս… ինչպէս որ դուք կ'ըսէք, աւելի խելացի… (հողովը յգելով) Օ՛ւֆ, ո՞ր սատանան է սոր մէջը:

ՔՕԼ. Բայց.. Շաքարախառն պաքսիմատ:

ԲԺԻՇ. Թերեւս մարմարիոնէ շինուած:

ՔՕԼ. (Մեծ աշխոյժով, որ տէր Լոկրետեա հոգայ բանալու մասնաւորապէս դառնալ.) Տիկինը մատանասենեակէն կուգայ կոր:

ԲԺԻՇ. (հողովը Քօղէլով) Դի՛ր սա մէկ տեղ մը, զաւակս:

ՔՕԼ. Պարոն, գլխ մի՛ թողուք:

ԲԺԻՇ. (հրէէն անոր օգնելու գալով) Բայց ո՛չ… բաներնիս աղէ՛կ է, աղջիկս, ո՞ր կողմը, ո՞ր կողմը:

ՔՕԼ. Բայց օ՛ն, դէպ 'ի ձախ, ձախ կողմը գացէ՛ք… դուք պատուհանին կ'երթաք:

ԲԺԻՇ. Ի՞նչ կ'ըսես, դնենք սա՛ հօն պատշգամին խաղխամքին (փարմաղըլըդ) վրայ։

ՔՕԼ. Աս շատ մեծ է, հօն չ'կայնիր։

ԲԺԻՇ. Պատուհանը կը գոցենք։

ՔՕԼ. Դուռը կը բացուի՛։

ԲԺԻՇ. Ծո՛ւռ քալէ։

ՔՕԼ. Ահա՛ ոտկինը։

ԲԺԻՇ. Վերցո՛ւ... վեր ա՛ռ կ'ըսեմ, վերցու... աղ շատ է... օ՛ն դգուշացիր... շա՛տ է։ (Կողովը գլխիվայր կը թաւալի խաղխամքին վրայէն, ու ջրանցքին մէջ կ'ընկղմի, որ տակէն Լուկրետիա ներս կը մտնէ. Քօլօմպին կեցած տեղը անշարժ կը մնայ. Բժիշկը շփոթած, փաղչը ու շուարթ դէմքով մը դէպ 'ի կնոջը կ'երթայ։)

## ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԲԺԻՇԿԸ, ՔՕԼՕՄՊԻՆ ու ԼՈՒԿՐԵՏԻԱ.

ԼՈՒ. (Մառանատնէնթակին դռնէն ներս մտնելով) Ո՛չ բեռնակիր կայ, ո՛չ ալ ան երկտասարդը... (Բժիշկը տեսնելով) ա՛յր իմ...

ՔՕԼ. (առանձին) Իմ խեղճ շաքարախառն պաքսիմատներս։

ԼՈՒ. (Մեծ շփոթութեամբ, վայրկեան մը լռելէ ետքը.) Բարեկա՛մս, կարծեմ թէ շրջագայելու գացեր էք։

ԲԺԻՇ. (արագօրութեամբ դէպ 'ի դուռը երթալով.) Ահա կ'երթամ։

ԼՈՒ. (ոյժգին հեռացող) Զի՛ս մի՛ թողուք. (նստելով) կամ գուցէ ո՛չ, իրաւունք ունիք... աւելի աղէկ է ամենուն... (Այս խօսքերը ըսելով, աչքերը հեռացնէ այն տեղ՝ ուր Շվէլիօն նստած էր) ալ հոնտեղ չ'կայ:

ԲԺԻՇ. (առանձին) Այն տեղը նայեցաւ:

ԼՈՒ. (ինքնիրեն) Ալ հոն չ'կա՛յ... ո՛վ Աստուած իմ. ուսկի՞ց գացեր է:

ՔՕԼ. (ցած ձայնով) Զանի տեսեր է եղե՛ր:

ԼՈՒ. (առանձին) Աներեւոյթ եղեր է. արդեօք տանը մէջ պահուըտե՞ր է... այնչափ յանդուգն երիտասա՛րդ...

ԲԺԻՇ. Քանի մը ժամէն կուգամ:

ԼՈՒ. (աւելի մեծ սարհուրանքով մը.) Մի՛ թողուք զիս... (առանձին, լռութենէ մը ետքը.) Այո՛... լաւ է ամեն բան խոստովանիլ... պարտիմ... (բարձր) բարեկամս... չ'գիտեմ ինչու համար... այս իրիկուն զձեզ տեսնելու... ձեզի հետ խօսելու կարեւորութիւնը կ'զգամ... ձեզի ըսելիք ունիմ, գուցէ հոս նշմարեցիք...

ԲԺԻՇ. Ահա՛ հոս ենք...

ՔՕԼ. (առանձին) Կը նուաղիմ:

ԼՈՒ. Չ'գիտեմ ինչպէս հոս կը գտնուէր, կ'երդուիմ ձեզի.... բայց վերջապէս այս տեղս կար...

ԲԺԻՇ. Այո՛:

ԼՈՒ. Կօղով մը . . .

ԲԺԻՇ. Այո՛ ։

ԼՈՒ. Դուք զանի տեսա՞ք ։

ԲԺԻՇ. Ո՛չ . . . շատ տարօրինակ բան է . . . ո՛չ, եւ դո՛ւն, Քօլօմպին. եւ սակայն կօղով մը . . . սիրելի բարեկամուհիս . . . բայց սակայն շատ . . . շատ մեծ բան մը չէ . . . կօղով մը ։

ԼՈՒ. Բնական է որ մէջը . . .

ՔՕԼ. (առանձին) Զանի բացե՛ր է ։

ԼՈՒ. Պարոն մէջը կար . . . մարդ մը ։

ԲԺԻՇ. Ի՞նչ ։

ՔՕԼ. (առելի մեծ երկիւղով) Մա՛րդ մը, (բժշկին) մարդ մը, պարո՛ն ։

ԲԺԻՇ. (խնդալ ջանալով) Իրա՞ւ, ո՛հ, բա՛, ո՞վ ։

ԼՈՒ. Ես տեսայ զանի, պարոն, անոր հետ խօսեցայ, իմ աչքիս իր կօղովին մէջ մտաւ ։

## ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԵԶԱԲԵԼ. ՔՕԼՕՄՊԻՆ, ԲԺԻՇԿԸ, ԼՈՒԿՐԵՑԻԱ.

ԵԶԱ. (Քօլօմպինէին ցած ձայնով եւ խիստ սաստիկ տարակուսանօք մը.) Ո՛հ, Քօլօմպի՛ն, իմ սիրելի Քօլօմպինս, այն Նամակը ես կարդացի . . . ամենը հասկցայ . . . ինքն է . . .

ՔՕԼ. (ցած ձայնով) Ո՞վ ։

ԵԶԱ. (ցած) Ի՛նքը, իմ սիրահա՛րս, հոս է։

ՔՕՂ. (ցած) Տա՞նը մէջ։

ԵԶԱ. Ինքը այն կողովին մէջ մտած է ծաղրածու կերպով մը։

ՔՕՂ. (ձեռք մ'արձկելով) Ո՛հ։

ԲԺԻՇ. Ի՞նչ եղար։

ԵԶԱ. (անհանգստութեամբ բոլորտիքը նայելով) Աս տարօրինակ բան է... զանի չ'եմ տեսներ։

ԲԺԻՇ. Ի՞նչ կը փնտռէք տա այդպէս. գնա՛ ատկէ։

ԵԶԱ. (աւելի անհանգստութեամբ Քօղօմպինէն) Զանի չ'եմ տեսներ կոր։

ԲԺԻՇ. Գնա՛ ատկից։

ԼՈՒ. (ցած ձայնով բժշկէն.) Բարեկամս, կ'երդուիմ ձեզ որ չգիտէի...

ԲԺԻՇ. Գնա՛ ատկից, առանձնանալ կ'ու-զեմ։

ԼՈՒ. (դուրս ելնելով) Ո՞ւր պահուըտեր է։

ԵԶԱ. (առանձին, նոյնպէս եւ լալով) Ո՛հ, Աս-տուած իմ, ի՞նչ է եղեր։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

### ՔՕՂՕՄՊԻՆ եւ ԲԺԻՇԿԸ.

ԲԺԻՇ. Պատուհանը գնա՛ ... գնա՛ նայէ՛ շուտ ... գուցէ լողալ գիտէր։

ՔՕՂ. Այո՛, պարոն ... բան մը չ'եմ տես-

ներ կոր . . . յատակը գացած պէտք ըլլայ ։ Ո՛հ, պարո՛ն, ի՞նչ պիտի ըսէ օրիորդը՝ երբոր լսէ . . . ինքը անոր յարած էր ։

ԲԺԻՇ· Որո՞ւ ։

ՔՕՂ· Ա՛ն երիտասարդին որ . . . դուք աղէկ գիտէք . . . Պատուայի սիրահարը ։

ԲԺԻՇ· Վե՞րջապէս ։

ՔՕՂ· Լա՛ւ, ահա՛ անիկայ է որ . . .

ԲԺԻՇ· Ո՞ր . . . ի՞նչ ։

ՔՕՂ· . . . Վրայէն՝ ջրանցքին մէջը ։

ԲԺԻՇ· Ո՛հ, բա՛ ։

ՔՕՂ· Ինքն է, նա ինքզինքը հոս խրկել տալ մտածեր էր . . .

ԲԺԻՇ· Էյ, անիկայ է, գնա՛ բանդ ։

ՔՕՂ· Խե՛ղճ օրիորդ․ արդարեւ ալ հիմա կրնայ ամուսնանալ ուրիշի մը հետ, ահա այրի մնաց ։

ԲԺԻՇ· Ամուսնանա՛լ, հիմայ ես հարսնիքի սի՛րտ ունիմ ։ Տէր Բանթալօնն եւ իր ապուշ որդին պատեհ ժամու մէջ պիտի հասնին ։

ՔՕՂ· Պարո՛ն, արդեօք կրնա՞յ ըլլալ՝ որ ատոր համար դատաստանի կանչուինք ։

ԲԺԻՇ· Ո՛չ, պիտի տեսնես որ մարդ՝ այդպիսի անձինքը կրնայ ջրոյ մէջ ընկղմել, թող որ . . . չնաշխարհիկ ես դուն ։

ՔՕՂ· Ողորմա՛ծ, արդեօք մէկն զմեզ տեսա՞ւ ։

ԲԺԻՇ. Օ՛ն, դու լռէ՛, սոխ անկարելի է..
գլխս կը դողացնես կոր. անկարելի է։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

### ԲԺԻՇԿԸ՝ ԼԻԼԻՕ, ՔՕԼՕՄՊԻՆ.

ԼԻԼ. (Ներս մտնելով, ինքնիրեն) Տարօրինա՛կ տուն... վերէն բանէ ինչուան վար՝ չկայ անկիւն մը, որ մարդ կարենայ պահուըտիլ՝ եւ չըկըրցի ալ գտնել... (Յանկարծակի զՔօլօմ-պինն ու զԲժիշկը տեսնելով.) Ո՛հ, բանուեցա՛յ։
(Երեքնին մէկէն շարժանօք երգելու կը նային.)

ԵՐԵՔՆԻՆ

ԼԻԼ. (տէրուն հերպարանօք մը ողջունելով.)
Պարոն...

ԲԺԻՇ. (Մի եւ նոյն տեսարանի խաղը) Պարոն...

ԼԻԼ. (Մի եւ նոյն տեսարանի խաղը) Պարոն...

ԲԺԻՇ. (առանձին)
Ո՞ւսկից ելաւ աս մարդը դուրս, սատանա՛յ.

ԼԻԼ. (առանձին)
Տե՛ս, ինչպէս գլխ կը դըննէ կոր սախկայ,
Եւ ինչպէս վէս բընութեան տէր կ'երեւայ.
Խընամակալն ըլլալու է սախկայ...
(Նորէն մարդավարութեամբ ողջունելով)
Պարոն...

ԲԺԻՇ. (Մի եւ նոյն տեսարանի խաղը) Պարոն...

ԼԻԼ. (Մի եւ նոյն տեսարանի խաղը) Պարոն...

ԲԺԻՇ. (անհամբերութեամբ) Պարո՛ն . . .

ԼԻԼ. (ինքնիրեն) .

Կը վախնամ քոյժ չ՚ըլլայ մէկը բանին յայտնէ ։

ՔՕՂ. (առանձին)

Ասիկայ ցաւ չը տեսնողին մէկն է ։

ԲԺԻՇ.

Ճամբո՞րդ է պարոնն, եւ տեղէ՞ մը գայ . . .

ՔՕՂ.

Պարոնն երկինքէ՞ն գլխուածով կ՚իյնայ ։

ԼԻԼ. (առանձին)

Այ, գլխուածը, կը շփոթի .

Եւ ահա վայրկեան

Քըննադատական ։

ԲԺԻՇ. ու ՔՕՂ. ԼԷԼԷՕՅԻՆ

Խօսէ՛ ապա . մէջ վայելուչ մի տան

Ասանց գործի որ կու գայ քիչ անգամ,

Եւ կը թըւի՝

Թէ կը փնտըռէք դուք յայտըմ վայրի . . .

ԼԻԼ. (աւելի մեծ շփոթութեամբ մը) Ա՛յո . . .

ԲԺԻՇ. ու ՔՕՂ. Ո՞վ .

ԼԻԼ. Ծըշդիւ ինքն է սա .

(Ապահովութեամբ)

Պարո՛ն, ամեն ազնիւ սրտեր կը բաղձայ,

Որ դուք իրեն եւ նա ձեզի ծանօթնայ,

Երբ երեւցաք դուք ինծի . . .

Պատրաստուէի պայն ըսելու ես ձեզի ։

ԲԺԻՇ. (ցած ձայնով Քօլօմպինին)

Քօլօմպի՛ն ,
Քօլօմպի՛ն ,
Միթէ սա՛ սատանակ մ'է :

ՔՕԼ. (Նոյնպէս)

Այս կերպարան
Փաղաքշական
Պարոն , լաւ բան մ'ոչ կ'բռէ .

ԼԷԼ. (առանձին)

Կը կարծեմ,
Կը կարծեմ,
Թէ խելքով պատասխանեմ.

ՄԻԱՏԵՂ

ԲԺԻՇ. ու ՔՕԼ.

Յիրաւի կարծեմ
Թէ , իմ կամքիս դէմ,
Ցանկարծական ներկայութիւնն
Ինձ պատճառէ խռովութիւն ու յուզում:

ԼԷԼ. Բայց սակայն կարծեմ
Թէ իմ կամքիս դէմ,
Իմըս յանկարծ ներկայութիւն ,
Պատճառէ Նմա խռովութիւն ու յուզում.

ԲԺԻՇ. Պարոն գլխ տեսա՞ք.
Աթոր վրայ գլխ կը պատէ զարմանք :

ԼԷԼ. Այո՛ , 'ի չըջեըն 'ի Վենետիկի ,
Այն ատենը որ հընչէ զեփիւռը ,
Կը նըկատէի
Գ.ոռ պալատները . . .

Աստղը դիմօք իւր տըխրական
Արծաթազօծէր զԱդրիական * ...
Կ՚երթայի խորհելով ...
Ես նաեւ դիտելով ...
Ո՛հ, իրիկունն է բանաստեղծական ...։

ԲԺԻՇ. (անհամբերութեամբ)
Ապա, պարո՛ն, դուք զիս տեսա՞ք.

ԼԻԼ. Այո՛.

ԲԺԻՇ. Ո՞ւր ուրեմն ։

ԼԻԼ. Պատշգամին վրայ, հոն, բայց ...

ԲԺԻՇ. Մեծ Աստուա՛ծ.

ՔՕԼ. (ճծշէն)
Ընդ իւր դիմօք փաղաքշական
Ծածկէ՞ արդեօք նըշմարանք մ՚ան ։

ԲԺԻՇ. (նոյնպէս)
Քօղամպի՛ն
Քօղամպի՛ն
Կուտաս սարսուռ դուն ինծի ։

ԼԻԼ. Կը կարծեմ,
Կը կարծեմ,
Թէ անիկայ կը խաբուի ։

ՄԻԱՏԵՂ

ԲԺԻՇ. ու ՔՕԼ.
Կը վախնամ, կարծեմ
Թէ իմ կամքիս դէմ,
Ցանկարծական ներկայութիւնն

---

* Ծով կամ ծոց Վենետիկի ։

ինձ պատճառէ խռովութիւն ու յուղում։

ԼԻԼ. (առանձին)

Հաւատա՛ ինձ, ատոր վրայ կը խնդամ

Որովհետեւ կը տեսնամ

Թէ իմս յանկարծ ներկայութիւն

Կամաց կամաց կը պատճառէ նմա յուղում։

(Տեսարանէն կ'ելնէ աղահօճը-Բեամբ ու դէպ 'ի պարտէզը կ'երթայ.)

ՔՕԼ. (ցած բժշկէն)

Պարոն երկուքս ալ կորանք մենք ահա՛

Վարպետութիւնն ես տեսայ ինձ հաւատա՛.

Անհամ ձայնով աս մարդը...

Արդեօք չ'ըլլա՞յ ոստիկան մը։

(Լէլէօ շէնօրը դէտէննան հերդէն չ'առնորժելով դէպ 'ի տեսարանին ներքին կողմ դուռը երթալ կ'ուզէ.)

ԲԺԻՇ. (անոր ճամբան գոցելով)

Պիտի չ'ելնէք դուրս պարոն.

ՔՕԼ. (նոյն տեսարանի խաղը)

Քենէ չ'եմ զատուիր, պարոն,

ԲԺԻՇ. Ո՛վ ըլլալնիդ կը մտածենք.

ՔՕԼ. Ո՛ւր երթալնիդ կը գուշակենք.

ԼԻԼ. (առանձին)

Ահա՛ թակարդն ինկանք մենք։

(Փախչիլ կը փորձէ.)

ԲԺԻՇ. ու ՔՕԼ. (կրկին շանի բերելով)

Ո՛չ, ո՛չ, պիտի դուրս չ'ելնէք.

ԼԻԼ. (դողդղալով)

Պարոն Թող ձերին վրէժխնդրութիւնը
խաղաղէ վայրկեան մ'իր սաստկութիւնը ․
Կը խոստովանիմ վարմունքս անխոհեմ․ ․ ․
Ամենեւին ես աւազակ մը չ'եմ,
Ազնուական մարդ մ'է հայրըս իմին ․
Ես ալ Լէլիօ կը յորջորջըվիմ ։

ԲԺԻՇ․ (առանձին) Հէ՞, ի՞նչ ․

ԼԷԼ․ Լէլիօ ։

ՔՕԼ․ Ի՜նչ, անունըդ ա՞տ է քուկին ։

ԼԷԼ․ Որդին եմ Տէր Բանթալօնին ։

ՔՕԼ․ (սաստիկ ուրախութեամբ մը)
Ո՜հ, ո՜հ, պարոն դու Լէլիօ, թողէք որ մենք ըզմեղ տանք,
Անակընկալ երջանկութեան, որ տեսիլքովդ կ'ըստանանք ․
Ծաղըալից վըրխպա՜նք ․
Ի՜նչ է այս իմ զարմանք ․
Ի՜նչ, դո՞ւք էք, տէր,
Կ'օրհնեմ զերկին, ո՜հ, վայրըն մեր ։

ԼԷԼ․ (առանձին)
Ահա՛ զարմանք օտարոտի
Իրենց ձայնը կը զիջանի ․
Եւ այն մեծ ցասում
Կ'ընէ քաղցրագոյն
Ընդունելութիւն ։

ՔՕԼ․ ու ԲԺԻՇ․
Ի՞նչ է ատ քու խիստ դէմքը ․

ԼԷԼ. Բայց . . . խնդամ ընդհակառակը.

ՔՕԼ. Հաճեցէք դուք մնալ հոս
Ամեն մարդ ձեզ պիտի պատուէն*,
Իմ մանկամարդ տիրուհւոյս
Ներկայացնել զձեզ դիմեմ։

ԲԺԻՇ. Այս տանս մէջ կը կամիմ
Կառուցանել ձեզ դրախտ մը,
Բնակարանս ու ինչքս իմ,
Հարստութիւնս են քուկը։

ԼԷԼ. (առանձին մէկ կողմանէ մեկնելով)
Ասի ըղձեզ կործանե՛լ է,
Ի՞նչ, մեկը զիս պատուել (խնճոյիւք) կ'ուզէ,
Ո՛հ, եմ ես 'ի վըտանգի,
Ներկայութիւնս իմ վասըն զի
Կրնայ լեցնել իրենց փափաք
Կը հաւանիմ զանոնք ընել երանելի։

ՔՕԼ. Ցո՛յս ախորժելի,
Կարծեմ, հաւանի։

ԼԷԼ. Երկուքնիդ ալ դուք կ'ուզէ՞ք որ կենամ.
Երջանիկ եղի՛ք, հաւանիմ. . . մնամ. . . ։

(Թիկնաթոռու մը վրայ նըստարածու, որ Քօլօմպէն անոր կը ներկայացնէ.)

ԲԺԻՇ. (ցած ձայնով, ուրախութեամբ Քօլօմ-պէնին) Լէլի՛ն է։

ՔՕԼ. (նոյնպէս) Ինքն է . . . աղէկ որ ինքն է եղեր, պարոն, անանկ չէ՞։

* Պատուել խնճոյիւք։

ԲԺԻՇ. Այո՛ . . . գալը շատ գէշ եղաւ . . . (Քովէն) Սիրելի պարոնս . . . մեծապէս ուրախ եմ զձեզ տեսնելուս ։

ԼԻԼ. Պարոն, ես եմ . . .

ԲԺԻՇ. Բոլորովին ապշած . . . թէպէտ եւ ճշմարիտը խօսելով, անպատեհ ժամու մէջ հոս ներկայացաք . . . վերջապէս դուք չգիտէիք . . . ատ ձեր յանցանքը չ՛է ։ Ես պէտի իմացնեմ այն տիկիններուն ։

ԼԻԼ. Այդ պատշաճ է ։

ԲԺԻՇ. Եւ դուք հոս պէտի բնակիք ։

ԼԻԼ. Ի՛նչպէս ուրեմն ։

ԲԺԻՇ. Ետքը . . . ուրիշ ժամանակ . . . որովհետեւ այսօր, ինչպէս կը տեսնէք, առողջութիւննիս շատ տեղը չ՛է . . . եւ այս տիկիններն ալ զուարթ չ՛են . . . եւ ոչ ալ ես . . . չ՛գիտեմ ինչու համար . . .

ԼԻԼ. Ցաւա՛լի, դուք ինծի զուարթ չ՛էք երեւար կոր .

ԲԺԻՇ. Առողջութիւննիս տեղը չ՛է . եթէ ես ձեր տեղն ըլլայի, ալ աս անառողջութեանց վրայ՝ պէտի մեկնէի . (կանչելով) Բօլօմպի՛ն . . . (Լեւէօյին) Ճամբայ ելնելէն առաջ բան մը պէտի ուտէ՞ք ։

ԼԻԼ. Բայց կարծէի թէ պատշաճ էր . . . կը փափաքէի երբէք զձեզ չը թողելու, պարո՛ն ։

ԲԺԻՇ. Շատ մարդասէր էք . . . (Բօլօմպէնէն, որ մտատանջուած կը մտնէ.) Շո՛ւտ ըրէ . . . գուցէ պարոնը աճապարելու գործ մ'ունի :

ԼԻԼ. Ի՞նչ սատանայ մարդ է աս. գլխ ընդունելով մեծապէս ուրախացաւ . . . եւ վերջը ելեր գլխ ճամբայ կը դնէ . . . (Բարձր) Ներեցէ՛ք . . .

ԲԺԻՇ. (ոյժգին կերպով) Վէնէտիկ գեղեցիկ քաղաք մըն է, անանկ չ'է՞ :

ԼԻԼ. Պարոն, աքանչելի . . . ամեն տեղ ջուր :

ԲԺԻՇ. Ի՛նչ. (Բօլօմպէնէն, որ ներս կը մտնէ սեղանով մը ու գաւաթներով) Ո՛հ, շուտ ըրէ՛ դու . . . (Բօլօմպէն երկու գաւաթները լեցնելէն ետքը) Ահա ես, պարոն, քառասուն տարի է որ ասոր սովորութիւն ունիմ, եւ կրնամ ըսել որ երբէք հանդարտութիւնս ու անխռովութիւնս չկորսնցընելէս զատ, անպատիւ գործ մ'ալ չեմ գործած . . . եւս առաւել յանցանք մը :

ԼԻԼ. (իր գաւաթը մէկ խմելով պարպելէն ետքը) Բայց, պարոն, կարծեմ թէ ոչ մէկը . . . վա՜յ . . .

ԲԺԻՇ. Ի՞նչ եղաք.

ԼԻԼ. Ոչինչ :

ԲԺԻՇ. Ասի Լաքրիմա — Քրիսթին ըլլալու է:

ԼԻԼ. Այո՛, կարելի է. տարօրինակ ախորժակ մը ունի նա :

ԲԺԻՇ. (գաւաթը իր շրթունքներուն տանելով.) Ո՛չ... (յանկարծակի կանգ կ'առնէ, ուռուցիկ խուովութեամբ մը, ու Բօլօմպինին կը մօտենայ, որ ձեռնոցները գրասեղանին վրայ դնելու գացած է.) Ուսկի՞ց առիր ասի։

ՔՕԼ. (նոյնպէս) Բայց, պարո՛ն... մառանասենեակէն։

ԲԺԻՇ. (ցած ձայնով) Մառանասենեակէն մի՛, ասի իմ չինած դեղս է։

ՔՕԼ. Ի՞նչ կ'ըսէք...

ԼԻԼ. Ասոր ի՛նչ տեսակ գինի ըլլալուն իմ խելքս չ'համնիր կոր. (դէպ 'ի Բօլօմպէն կը կըռթնի ու կը շարունակէ իր խօսակցութիւնը, ձեռնոցներ աթոռի մը վրայ ձգած.) Վենետիկի վըրայօք կը խօսէիք, պարո՛ն. Վենետի՛կ... իմ ամէն փափաքանացս առարկան էր... ոչ թէ միայն հոս ձեզի հանդըպելու շընորհքն ունենալու համար... այլ որովհետեւ Վենետիկի մէջ գանձ մը ծածկուած էր ...պարո՛ն, իմ ուզած հաճութիւնս չեմ գտար կոր։

ԲԺԻՇ. (առանձին) Անոնցմէ չա՛տ գըրի.... (Բժիշկը աչուըները Լէլիօյին վրայ տնկած, ու պատասխանելու անկարող։)

ԼԻԼ. (մէջ ծալելով) Այո՛, Վենետիկ ինէ կը ծածկէր զանի... Տարօրինակ բա՛ն, ամէն բան կը դառնայ կոր։

ՔՕԼ. (ցած) Ո՛հ, Աստուա՛ծ իմ, Պարո՛ն, ի՞նչ կ'ըլլայ կոր :

ԼԻԼ. Կը դառնայ կոր. մի՛ դառնաք. շը-նորհք ըրէք ես եկած եմ... ի՞նչ դէշ գինի :

ՔՕԼ. (ցած) Ի՞նչ կ'ըլլայ կոր :

ԼԻԼ. (ծռեալ շշանոցը վրայ) Ի՛նչ սոսկալի գինի... Թո՛յն... (բազմոցին վրայ կ'իյնայ :)

ՔՕԼ. Թո՞յն :

ԲԺԻՇ. (գլխովը նշան ընելով) Այո՛ ... այո՛ :

ՔՕԼ. (ջախ ծունկը եղած աթոռներուն մէկուն վրայ իյնալով) Թո՛յն :

ԲԺԻՇ. (աջ ծունկը ուրիշ աթոռի մը վրայ իյնա-լով) Եւ երկուքէ՛ն ալ. (Լռութիւն.)

ՔՕԼ. (լալով) Ո՛հ, Աստուա՛ծ իմ, ալ հի-մայ օրիորդին ձեռքը բան չ'մնաց :

ԲԺԻՇ. (տխուր ու մեղմահամ ձայնով մը) Գոցէ՛ դուռները, Քօլօնէլի՛ն ... գոցէ՛ ամէնն ալ :

ՔՕԼ. (հրամանը կատարելով) Այո՛, պարոն ... այո՛ :

ԲԺԻՇ. Նիգերը քշէ՛ :

ՔՕԼ. Այո՛, պարոն ... ի՞նչ կը մտածէք ընել :

ԲԺԻՇ. Պահվըտինք, շուտակս, նախ պահ-վըտինք մենք :

ՔՕԼ. Այո՛, պարոն, եւ վե՞րջը ...

ԲԺԻՇ. Վերջը ... ի՞նչ կ'ուզես որ ընենք, աս ալ միւսին քովը կը խրկենք : (Փողոցէն

Դուռը կը զարնէ բազմաթիւ հարուածներ տալով ձայ-ներ կը լսուի :)

ՔՕԼ. Պարո՛ն ... դուռը կը զարնեն :

ԲԺԻՇ. Մի՛ բանար, զաւակս :

ՔՕԼ. Ո՛չ, պարոն, ոստիկաններն են ... կուգան կոր, սանդուխքէն վեր կ'ելլեն կոր :

ԲԺԻՇ. (Ոյժգին կերպով զԼուին բռնելով.) Օ՛ն, օգնէ՛ ինծի :

ՔՕԼ. Ե՞ս, պարոն :

ԲԺԻՇ. Դո՛ւն ըրէ :

ՔՕԼ. Ատոր ոյժս չ'բաւեր : (Սենեակին դը-ռանը կը զարնեն, բանալ փորձելնէն վերջը.)

ԲԺԻՇ. Աս բազմոցին մէջը դնենք, սնարքն (չիլթէ) ալ վրան : (Բժիշկը զԼուին բազմոցին վրայ կը տարածէ, Քօլօմպին ու ինքը բազմոցին նստարանը վերցնելով դէմ 'ի իրենց կը ծածկեն, Լուի կը սահի ու վերջը կ'իյնայ. ոյժգին կերպով բազմոցը կը գոցեն.)

ԼՈՒ. (դրսէն) Բա՛րեկամս :

ՔՕԼ. Երկի՛նք, Տիկի՛ն :

ԲԺԻՇ. Դո՛ւն ըրէ՛ սնարքը :

ԼՈՒ. Նիգերը դրե՞ր էք, ի՞նչ էք ըրեր :

ԲԺԻՇ. Օ՛ն, փախի՛ր :

ԼՈՒ. Բացէ՛ք, Տէր Բանթալօնն է եկողը :

ԲԺԻՇ. Մե՛ծ Աստուած :

ՔՕԼ. (ճչալով) Հա՛յրը :

ԲԺԻՇ. (բազմոցին վրայ սնարքը դնելով) Հա՛յրը ... հա՛յրը ... կ'երթամ ... ահա ... : (կը բանայ։)

## ՏԵՍԱՐԱՆ ԺԳ․

ԼՈՒԿՐԵՑԻԱ, ԲԱՆԹԱԼՕՆ, ԲԺԻՇԿԸ, ԵԶԱԲԵԼ,
և ապա ՔՕԼՕՄԳԻՆ․

ԲԱՆ․ Աղէ՛, ահա՛ ինքը․ զինքը կը գրկեմ վերջապէս, այս սիրելի բժիշկը։ Արդարեւ կը պարտաւորէի փութալ անոր ձեռքը սխմելու։ Ձեզի գրած էի, որ այսօր պիտի գամ, ու խոստմունքս կատարեցի․ թէպէտ եւ մարդ երբեք իր գործերէն գլուխ չ՛կրնար առնել։ Սակայն եւ այնպէս ամենեւին ժամանակ չը կորսնցուցի, եւ նաւէն Վենէտիկ ելնելս ու հոս վազելս մէյմ՛ըրի, առանց իսկ բոլոր կահ կարասիքս առնելու սպասելու։

ԲԺԻՇ․ (առանձին, անոր ձեռքը խանդաղատանօք սեղմելէն վերջը) Ողբալի փութացում մը կայ աս ընտանիքիս մէջ։

ԲԱՆ․ Ցիրաւի՛ աղէկ ըրի, վասն զի քիչ մը ետքը՝ ա՛լ մէկը ինձ դուռը պիտի չ՛բանար․ սկսեր էր վարը համբերութիւնս հատնիլ․ բարեբաղդաբար աս տիկինները իրենք եկան դուռը բանալու։ (Կ՚երեւայ Երջնոցն ստորէը Գրասենեկանին քով եղող սենեակ մը վրայ կը տնէ․)

ԵԶԱ․ (առանձին) Եթէ ո՞վ ըլլալը գիտնայի ․․․ յիրաւի՛ տեղէս անգամ պիտի չ՛ելնէի։

ԼՈՒ․ (Ձեռքը խիստ նախապաշարուած ու շա-

նաւուն դուռներէ աչքէ անցընելով) Ո՞ւր տեղ պահ-վըտեր է ան երկաթասարդը․․․ ամեն մէկ քայլ առնելուս՝ սիրտս կը դողայ թէ դէմս պիտի ելնէ ։

ԵԶԱ․ (առանձին, եր Բողըրունը նայելով) Բայց ո՞ւր են խօթեր այն կողովը ։

ԲԱՆ․ Բա՞ն մը կը փնտռէք․․․ Ահա՛ ես Վենետիկի մէջ եմ, եւ արդարեւ մեծապէս ուրախ եմ հոն գտնուելուս․ որովհետեւ վըս-տահ եմ որ հոս աղէկ պիտի զբօսնում, ինչ-վան որ մեր կարգադրութիւնները ըրինան, եւ որդիս ձեզ ներկայացնեմ ։ Բայց, աղէկ միտքս ինկաւ, գուցէ ինքը արդէն եկած է ։ Ձեզի այցելութիւն ըրա՞ւ ։

ԵԶԱ․ Ո՛հ, անոր մինչեւ կանուխ գալուն տարակոյս չ՚կայ ։

ԲԱՆ․ Ի՞նչ ։

ԲԺԻՇ․ Ոչինչ․․․ ասի տղու խորհրդածու-թիւն է ։

ԲԱՆ․ (առանձին, շուռ Բենէ մը եկող) Ասի տարօրինակ բան է, ասոնք շատ ուրախ չ՚են երեւար կոր․․․ (բժշկին) Արդեօք ձեզի ե-կա՞ւ․․․

ԲԺԻՇ․ Ո՛չ․․․ ամենեւին ։

ԲԱՆ․ Ապա ուրեմն ընթրիքը մեր զուար-թութիւնը տեղը պիտի բերէ․ (Լուկրեցիոյ նշանացի կ՚ընէ) Զ՚գիտեմ ճամբորդութե-

նէս է, կամ թէ օդէնն է, ախորժակ մը կ՚զգամ։

ԼՈՒ. (Քօլօմպէնին, որ ճրագը աշտանակով մը ներս կը մտնէ ու զանի գրասեղանին վրայ կը դնէ.) Ընթրի՞քը . . . որովհետեւ . . . ո՜հ, պարոնը պիտի ընթրէ՞։

ԲԱՆ. Սակայ՜ն։

ՔՕԼ. Որովհետեւ . . . կարծեմ թէ մոռցայ, տիկին։

ԲԱՆ. Ընթրի՞քը։

ԼՈՒ. Գոնէ, բերէ՛ք պարոնին, պաքսիմատ, քաղցրաւենի, գինի։

ԲԺԻՇ. (ոյժգին հերքելով) Ո՛չ, գինի չ՚ուզեր։

ԲԱՆ. Ի՞նչ։

ԼՈՒ. Այս ամէնը իմ ձեզի գրուցած սենեակս պիտի տանիք պատրաստէք։

ՔՕԼ. Որովհետեւ . . . . սա կայ որ . . . . կարծեմ թէ մոռցայ, տիկին։

ԲԱՆ. (առանձին) Ո՜հ, բայց աս աղջիկը բան մը չ՚ըներ կոր։

ԼՈՒ. Տե՛ս ինչպէս սա անհաճոյ է, քիրա․ւի՛, պարո՛ն, ամօթապարտեալ եմ . . .։

ԲԱՆ. Ինչո՞ւ համար, տիկին. չուտով գիշեր մը անցաւ. եւ եթէ չ՚ընթրենք, իմ հանդարտութեանս համար հոգ մ՚ընէք, ամէն տեղ իմ հանգստութիւնս տեղն է . . հոս ; աս սրահիս մէջ, աս բազմոցին վրայ։

ՔՕԼ. (ձէն մ՚արձկելով) Ո՜հ։

ԲԺԻՇ. (տառանջէն, երկիւղէ) Իր որդւո՞յն վրայ։

ԲԱՆ. (տառանջէն) Ի՞նչ սատանութիւն ունին ասոնք։

ԲԺԻՇ. (ոյժգին կերպով թանթալշնէն) Ո՛չ, ո՛չ, ներեցէ՛ք... չըպիտի թողում... կը պահանջեմ...

ԲԱՆ. (գրեթէ մի և նոյն ժամանակը) Կ'աղաչեմ... կը խնդրեմ... եւ պիտի սրդողիմ մանաւանդ...

ՔՕԼ. (ցած ձայնով Բժշկէն) Ո՛հ, պարոն, կը թողուք զհայրը վրան պառկելու, երբ իր տղան...

ԲԺԻՇ. (նոյնպէս) Այս երկխուղին ակի՛ղըն է. բայց ի՞նչ կ'ուզես որ ընեմ.

ԼՈՒ. Կը ներէ՞ք մեզի, պարոն, վա՛ղը։

ԲԺԻՇ. (ցած ձայնով Քօլօմպէնին) Քնանալուն պէս, հոս եկու... մկրատներովդ... միւսը հանելու համար։

ԲԱՆ. (տառանջէն, զանոնք դիտելով) Ճշմարիտ, ասոնք բան մը ունին։

ԵԶԱ. (տառանջէն, յետոյ աշտանակները վառե-լէն ետքը՝ որ ետրաքանչէր ու կ'երթայ գրասեղանէն հրայէն առնելու,) Պատահած բաներուն վրայ մեծապէս ուրախ եմ։

ՉՈՐՍԵՐՆԻՆ

ԼՈՒ. (յետքը աշտանակով մը.)

Ո՛հ , դու պարոն Բանթալօն ,
Ի՛զձեզ գոհ ընել ես կը կամէի ,
Բայց բանն երբ հաճոյ ըլլալ գայ ձեզի ,
Ամէն բան կ՛երթայ հոս ձախողակի ,
Բարի իրիկուն , պարոն Բանթալօն ։

ԽՋԱ․ (նոյնպէս)

Ո՛հ , դու պարոն Բանթալօն ,
Շատ անգամ նօթի մարդը կը տըրտմի .
Խընդրեմ Տէրն ըլլայ օգնական ձեզի .
Այս սըրահիս մէջ հանգիստ քընացի ,
Բարի իրիկուն , պարոն Բանթալօն ։

ՔՕՂ․ (նոյնպէս)

Ո՛հ , դու պարոն Բանթալօն ,
Թէ կէս գիշերուն ամենն երբ քուն է
Մէկ ձայն մը քունէդ քեզ արթընցընէ . . .
Գընացի կըրկին չիւախսին հովն է .
Բարի իրիկուն , պարոն Բանթալօն ։

ԲԺԻՇ․ (նոյնպէս)

Ո՛հ , դու պարոն Բանթալօն ,
Կեանք ըսածըդ է հողէ աման մի . . .
Աւաղ դիւրին է կոտրելը զանի .
Ծեր , երիտասարդ , կ՛ըլլայ՝ որ մեռնի .
Բարի իրիկուն , պարոն Բանթալօն ։

## ՏԵՍԱՐԱՆ ԺԴ․

ԲԱՆԹԱԼՕՆ մինակ .

Այս տանս մէջ եղող մարդիկը տրտում են ;

Վաղ առտու լուսնալուն պէս երթամ պիտի պանդոկին մէջ սենեակ մը վարձելու, լաւ անկողինով մը, լաւ ոչխարի գլուխով, ու գինիով գոնէ ինքզինքս պիտի ազատեմ։ (Երաժշտութեան 'ի ձայնս Երաժշտաց, լռութենէ մը ետքը.) Բայց աս բազմոցին վրայ շատ դէշ պիտի ըլլամ... (Կ'երթայ իր պարկը առնելու.) շատ դէշ ... ասոնք շատ տրտում են... (Հառաչանաց ձայն մը կը լսուի.) Ո՞վ սատանան է աս. (Երկիւղիւ իր բոլորտիքը կը նայի, պարկը ձեռքէն թող, Ճրագը յետեւը ու նորէն փետարանը կը դառնայ.) ինծի կը թուէր թէ... Իրա՛ւ, հիւսիսին հովն է, ինչպէս որ այն պզտիկը ըսաւ. (Ճրագը աշտանակակալին վրայ կը դնէ, ինքն ալ բազմոցին վրայ կը նստի, պարկը ծունկերուն վըրայ, ու կը մտածէ, որ ատեն երաժիշտները նուագընթաց չորս հոգիէն երգերնուն նպատակը կը յիշեցնեն թէ, «Բարի իրիկուն, պարոն Բանթալօ՛ն».) Այս տանս մէջ եղող մարդիկը բարի իրիկուն ըսելու տարօրինակ ոճ մը ունին. (Գիշերագըտակը գլուխը դնելով, որ արդէն իր պարկէն հանած էր.) իրենց տրտմութիւնը գլխս կը դրաւէ... Նոյնպէս ալ քունը։ (Ճրագը ձեռքէն կը մարէ ու բազմոցին վրայ կը պառկի.) Բժիշկը իրաւունք ունի, կեանքը խիստ քիչ բան մ'է... ինչո՞ւ համար աս սատանան ինծի աս խօսքը ըսաւ։ (Աս վերջին խօսքերը արտասանելով կը քնանայ։)

## ՏԵՍԱՐԱՆ ԺԵ·

ՔՕԼՕՄՊԻՆ, ձեռքը մկրատներ բռնած՝ դէպ 'ի հասարակութիւնը նայող ձախ կողմի դռնէն խորհրդաբար ներս կը մտնէ · ԲԺԻՇԿԸ, կամաց կամաց տեսարանին ներսի կողմի դռնէն կուգայ ձեռքը աղօտ լապտեր մը բռնած · ԲԱՆԹԱԼՕՆ, բազմոցին վրայ քնացած ։

### ՎԵՐՋԻՆ ՆՈՒԱԳ·

ԲԺԻՇ· Ցած խօսինք, լռութի՛ւն ։
ՔՕԼ· Կը վախնամ ձայնէն մինչ իմ քայլերուն
ԲԺԻՇ· (դողդղալով)
Թանկագին է այս վայրկեան,
Քաջութիւնն առ զէնք քեզի,
Եղի եւ դու ինձ նըման,
Անխըռով եւ ալ արի ։
ՔՕԼ· Թանկագին է վայրկեանս այս,
Բայց ճըշմարտիւ, մա՞րթ է ինձ,
Երբ դու իսկ կը դողդըղաս,
Յաղթել իմին երկիւղիս ։
ԲԺԻՇ· Եկո՛ւ, մօտենանք . . . կը քընանայ նա ;
Եւ բնաւ շարժման վրան նըշան չըկայ ։
ԲԺԻՇ· (ձայնը իջեցնելով)
Թ'արթըննայ ինքը . . .
Ու մեր գործադըրած
Ըսպանութիւնը
Յայտնէ բացէ բաց . . .
Ո՜հ, զիս կը պատէ սարսափը ։

ԲԺԻՇ. Շատ լաւ . . . եթէ արթըննայ,
Երրորդն ալ ինք պիտ՛ ըլլայ ։

ՄԻԱՏԵՂ.

ՔՕԼ. ու ԲԺԻՇ.
Ձիս կը ճընշէ սարսափը,
Գիշերն ու թանձր ըստուերը
Սիրտըս սառեցնէ
Յերկիւղէ.
Աւա՜ղ, աւա՜ղ կ'ըզգամ սըրտիս տըկարնալը ։

ԲԺԻՇ. (Բանթալօնին քունն ըլլալուն վրայ տարակոյս ըլլալէն վերջը)
Այս կը նընջէ . . . քակէ միւսը.

ՔՕԼ. (գործի սկսելով)
Ի՞նչ դըժբաղդութիւն է, պարո՛ն, մերը ։

ԲԺԻՇ. Քակէ՛, քակէ՛ տա կարը ։

ՔՕԼ. Ո՛հ, ես խիստ դէշ եմ ։

ԲԺԻՇ. Պարահանդէսի ոչ ալ ես մէջ եմ ։

ՔՕԼ. Տա լապտերըդ ցածը բռնէ ։

ԲԺԻՇ. Քակէ՛, քակէ՛, շուտով ըրէ.

ՔՕԼ. Շուտով ընել կ'ուզէի . . . ի՛նչ նը-
զոված կերպաս է սա ։
Կը շօշափէ իմ ձեռքըս զանի, ահա՛ ։

ԲԺԻՇ. (սաստիկ կերպով ծռելով)
Ոտքերէն բռնէ՛.

(Լապտերը յետոյէն Բանթալօնին վրայ կը յգէ ։)

ԲԱՆ. (պառկած տեղէն կ'ելնէ կը նստի.)
Հոդ տեղը ո՞վ է ։

(Բաղմոցէն հառաչանաց ձայն մը դուրս կ'ելնէ.)

ԲԱՆ. (Ճիչ մ'արձկելով ու տեսարանին դէպ 'ի առջեւ կողմը դիմելով.) Ո՛հ։

ՄԻԱՏԵՂ.

Ի՞նչ ողորմ ձայն եւ ալ նըւաղ,
Չ'ըլլայ հանողն այս ձայն ճիւաղ։

(Բժիշկը կը կծկուի գրասեղանին տակ, Բանբասօն Բաղմոցին տակ. Գօլօմպէն խնոցիները տեսարանին ներսի կողմէ պատուհանին քով եղող ամբոխ մը վրայ կը նետէ։)

ԼԻԼ. (Բաղմոցին անուրջը կը վերցնէ, ու իր եղած տեղը կը նստի.)

Ո՜վ գիս հոս բերաւ, արդեօք ո՞ւր տեղ եմ,
Շօշափեմ չուրջըս ու կը նըկատեմ...
Գըտնացա՞ծ եմ, թէ անմըտադրութեամբ
Զիս հոս տեղ բերեր արդէն թաղե՞ր են։

ՄԻԱՏԵՂ.

Զիս կը ճընշէ սարսափը.
Գիշերն ու թանձր ըստուերը
Սիրտը սառեցնէ
Յերկիւղէ։

Ա՜ւա՛ղ, աւա՛ղ, կ'ըղդամ սըրտիս տըկարնութը։

ԲԱՆ. Ի գուր ականջ կը դընեմ
Ալ ես ձայն մը ոչ լըսեմ.
Տարակոյս չըկայ էր սա երազ մը
Կամ գիշերային թըռուչնոյ մը երգը։

(Շօշափելով բազմոցը նորէն կը գտնէ, և ապահովութեամբ մէջը նետուելով Լէլիօյին բազկացը մէջ կ'իյնայ՝ որ ճիչ մը կ'արձկէ.)

ԱՄԵՆԸ ՄԷԿԷՆ. (ասդին անդին վազելով)

*Կրակ կա՛յ, լո՛յս, օ՛ն, կրակի՛ զանգակը՛.*

*Ո՞ւր գո՛րք, մարդասպա՛նն. գո՛ղն, աւազա՛կը։*

## ՏԵՍԱՐԱՆ ԺԶ.

ԲԱՆԹԱԼՕՆ, ԵԶԱԲԵԼ, *ձեռքերնին աշտանակներով.*
ՔՕԼՕՄՊԻՆ *եւ* ԲԺԻՇԿԸ.

ԼՈՒ. *ու* ԵԶԱ.

*Հոս կը գտնե՛նք, ո՞ր ողջին ձեզ*
*Խռովեց այսպէս*
*Շուտով շուտով խօսեցէ՛ք,*
*Վերջապէս դուք մեզ լսէք։*

ԲԺԻՇ. ՔՕԼ. ԲԱՆ. *և* ԼԷԼ. *միանգամայն.*

*Աւազա՛կ։*

(Լէլիօ, որ առաջուց բազմոցէն ետևը պահուըտած էր, այս վայրկեանիս աթոռուն մէջ տեղը կը գտնուի։)

ՔՕԼ. (ճիչ մ'արձակելով) Ո՜հ։

ԼՈՒ. *և* ԵԶԱ. *Ի՛նչը։*

ԲԺԻՇ. *և* ԲԱՆ. *Երկի՛նք։*

(Բոլորն ալ աւելի մեծ զարմանքով մը իրարու կը նային.)

ԲԱՆ. (Լէլիօյին) *Դո՞ւն ես։*

ԲՈԼՈՐ ՄԻՒՍՆԵՐԸ. Դո՛ւք էք, ի՛նքն է ։

ԲԱՆ. Որդեա՛կ իմ ։

ԼԷԼ. Հա՛յր իմ ։

ԵԶԱ. Ինքը, որդի՛դ, ճակատագիր երանելի
Ո՛հ, իմ սէրս է յապահովի .
Կը ծաղրէ մեր խորհուրդներուն վրայ բաղդը,
Թելադրէր զիս Պատուա երթալ իմ սիրտը,
Ու արդէն այրըս կը սիրէի ։

ԱՄԵՆԸ. Ի Պա՞տուա ։

ԼՈՒ. (առանձին, տրտմօրէն)
Ինքը կուգար,
Անոր համար ։

ԼԷԼ. (Եզաբէլին)
Հաւատարիմ կեցայ ես մեր երդմանցը .

ԼՈՒ. Ի՞նչ ըղձայուն է աս սիրահարը...

ԲԺԻՇ. Ջանի կարծէի ջրանցքին մէջը .

ԱՄԵՆԸ. Ջրանցքի՞ն մէջը ։

ԲԺԻՇ. Առանց ես գիտնալու,
Հոս տեղ փորձած էր օտարական մը
Տարաժամ մտնելու
Կողովի մը մէջը ։

ԼԷԼ. (ոյժգին հերքով)
Ես թողուցի ան կողովը .

ԲԺԻՇ. 4 ՔՕՂ.
Թողեր է եղե՛ր ինքն այն կողովը...
(Բժիշկը հարգա– ամենուն բաղհայը ԴԶ հը նեռանի .)

ՄԻԱՏԵՂ ·

Ո՛հ, ո՛հ, ի՛նչ աւիւն,
Երջանի՛կ վայրկեան,
Նաեւս տըրտմութիւն
Նաեւս անձկութիւն ․
Խիստ ցած ձայնով, խիստ ցած ձայնով,
Մեր երկիւղէն օ՛ն խընդանք,
Եւ ամենքնիս միանալով
Երջանկութեան ըղձեր տանք ։

ՎԵՐՋ

Spec 59

ՀՀ Ազգային գրադարան
NL0108445